

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


**ԳՅՈՒՂԻ ԿՈԼԼԵԿՏՎԱՑՈՒՄԸ**

ՅԵՎ

**ԼԿՅԵՄ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ. 1929 թ.



6517-5364

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ո. ՀՈՎհԱՆՆԻՍՅԱՆ

3ԿՊ1-11

2

Լուս.  
9(47)25

3ԿԸՄ

**ԳՅՈՒՂԻ ԿՈԼԼԵԿՏՎԱՑՈՒՄԸ**

**ՅԵՎ**

**ԼԿՅԵՄ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

~~16465-A 4102~~



**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ. 1929 թ.

ԹԵՏՏՐԱՍԻ ՑԵՐԿՈՊՈԴ ՏՈՒԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Հ. Ա 1046

Գալով. Ա 856

Գրտու. Ա 2682 (բ) — Տիրամ 3000

## Ա. ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԻՂԻՆԵՐԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԽՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՂԱՊՔԸ

Ամբողջ Խորհրդային Միությունը գերազանցապես (մեծ մասամբ) զյուղացիական յերկիր է։ Արդյունաբերությունը (զավոդներ և ֆաբրիկաներ), համեմատած մի շարք խոշոր և առաջավոր կապիտալիստական յիշերների (Փերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի) հետ, թույլ ե զարգացած։ Այս յիշերներությը բացատրվում է նախկին ցարական կառավարության հատուկ քաղաքականությամբ։

Ցարական կառավարությունը մեծ չափով արդյունաբերական ապրանքներ և մեքենաներ բերել ե արտասահմանից՝ դրա զիմաց տալով Ռուսաստանի հացը և զյուղատնտեսական այլ մթերքներ։

Սրա հետ մեկտեղ ցարական Ռուսաստանում յեղած արդյունաբերության կարևոր ճյուղերը և հանքային հանքատությունների մեծ մասը գտնվում եր ոտարյակարքական կապիտալիստական պետությունների ներկայացուցիչների ձեռքին։ Այդ կապիտալիստական պետություններն ունենալով միջոցներ և հնարավորություններ և ոգտվելով միաժամանակ Ռուսաստանում յեղած չափազանց եժան բանվորական ձեռքերից՝ մի կողմից անխնա շահագործում ելին Ռուսաստանի հարցատությունները, փոխադրելով այդ հարստություն-

ներն իրենց յերկիրը, մէուս կողմից իրենց պատրաստի տրդյունաբերական ապրանքները շատ ավելի ձեռնտու պայմաններով վաճառքի հանում Ռուսաստանում:

Ավելի վատթար դրության մեջ ելին գտնվում «ծայրագավառները», Ռուսաստանի կենտրոնից շատ հեռու ընկած վայրերը: Յեթև ոտարերկրյա կապիտալը կարողացել եր իր ազդեցության լենթարկել և ձեռք գցել բուն Ռուսաստանի արդյունաբերության զգալի մասը, ապա նոր աճող և զարդացող ուսւական և եղական քուրժուազիան իր ազդեցությունը տարածում եր մեծ չափով ծայրագավառների վրա, իր ձեռքը կենտրոնացնելով ծայրագավառների հարստությունները:

«Յեթե իր մայր յերկրում ցարական (իսկ հետագայում ժամանակավոր և կերենսկու) կառավարությունը ներկայացնում եր առավելապես ոտար կապիտալի գործակատարը, ապա ճանապարհանագույնը նա պետք ե կատարեր իր գործակատարությունը, գլխավորապես հայրենական կապիտալի նկատմամբ՝ վորապես «կոմպենսացիա» (նալաստ): Այդտեղ Անդրկովկասում նա ջանում եր առաջնառվելադր ծայրերկրի սպառողական, ինչպես նաև հում նյութի շուկան ուսւականի համար: Դա նրա առաջնակարգ և կարեռը հոգսն եր:

«Յեթե վերջինս (Ռուսաստանը) Արևմտյան Յեվրոպայի կապիտալի կթան կոմի եր, ապա ուսւական կապիտալի կթան կոմի եր դասնում Անդրկովկասը» (տես Ս. Կասյանի «Հայաստանի տնտեսական դասակարգակին ստրուկտուրա» գրքուկը):

Նույն դրության մեջ և յեղել նաև Հայաստանը։  
Սակայն այն տարբերությամբ, վոր Հայաստանը չու-  
նենալով Բագվի նավթը և Վրաստանի բնական ու աշ-  
խարհագրական հնարավորությունները՝ յենթարկվում  
եր մեծ մասամբ առևտրական կապիտալի շահագործ-  
մանը։

Այսպիսով նոր աճող սուսական բուրժուազիան,  
վորպեսզի կարողանա իր ձեռքը պահել ծալրագավառ-  
ները և կուլ չգնալ գրսի կապիտալին, անխնա, չը-  
տեսնված ձեռուով շահագործում և կեղեցում եր Ան-  
դըրկովկասի աշխատավորությունը։ Իսկ առևտրական  
կապիտալը թալանում, քայքայում և փոշիացնում եր  
Հայաստանը (այս մասին ավելի մանրամասն տես ընկ.  
Ա. Կասյանի վերոհիշյալ գրքունկը)։

Կոմկուսակցությունն ու խորհրդային իշխա-  
նությունը, վորոնք նպատակ են դրել կառուցել սո-  
ցիալիզմը մեր յերկրում, նրանք չեյին կարող շարու-  
նակել ցարական կառավարության քաղաքականու-  
թյունը։ Դրա համար ել խորհրդային իշխանության  
կազմակերպման առաջին իսկ որից կոմմունիստական  
կուսակցության առաջ դրվեց մեր յերկիրն արդյունա-  
քերական ուղիներով առաջ տանելու հարցը, Խորհր-  
դային Միության ինդուստրիալիզացիան։

Մեր առաջ դրված ե Խորհրդային Միությունը  
անտեսապես (արդյունաբերություն և գյուղատնտեսու-  
թյուն) ամրապնդելու և հզորացնելու խնդիրը։ Մեր  
առաջ դրված ե՝ արագ կերպով հասնել ամենաառաջա-  
վոր կապիտալիստական յերկրներին յեկ երանցից ել ա-  
ռաջ անցնելու խնդիրը։

Մեր բոլոր միջոցներով արագ բափով մենք պես

Ե առաջ սանենք մեր ծանր արգյութաբերուրյան զարգացումը, վորովիկետնվ ինչքան արագ զարգացնենք այդ, այնքան ինչ մետենաներ յեվ սարքավորում կներմուծենք կապիտալիուսական յերկբերից մեր յերկիրց, այնքան ինչ վայրուա (փող, վոսկի) կամն կապիտալիուսերին յեվ այնքան օուա կապիտալիուսական յերկցրեներից օնտեսապես անկախ կլիմենք, Յշապիտով խորեցային իօխանուրյունն ել ավելի կամրանա, անհաղթելի կզառնա: Մեր տնահսության զարդացման ճամյա պլանը հետազնդում և այդ նպատակները. հնդամլակի վերջում արդյունաբերության ամբողջ արտադրանքը զարգանալու յե 186<sup>0</sup>/օ-ով:

Մեր արդյունաբերության արագ թափի զարդացումից և կախված նաև մեր զյուղատնիսուրյան զարգացումը: Զե՞ վոր առանց արդյունաբերության զարգարցման մենք գյուղատնտեսությանը վոչ կարող ենք տրակտոր տալ, վոչ մալատիլկա (կալսիչ մեքենա), վոչ դութան կամ շարքացան և վոչ ել այլ գյուղատընտեսական մեքենաներ: Իսկ առանց այդ գյուղատընտեսական մեքենաների մեր գյուղատնտեսությունն առաջ գնալ չի կարող և այդ մեքենաների պահանջն որ ավուր ավիլանում և մեր չքավոր ու միջակ գյուղացիների կողմից:

Խորհրդային Հայաստանը ևս, լինելով Խորհրդային Միության անբաժան մասը, մեր հնդամլա պլանի համաձայն խոշոր քայլերով առաջ և գնալու: Պղնձի արդյունաբերությունը 1932-33 թ. տալու է 195 տոկ. տնում, ելեկտրո-եներգիան 1927-28 թ. համեմատությամբ հնդամլակին տալու յե 767 տոկ. աճում: Մնացած արդյունաբերությունը միասին վերցրած՝ 74,3 տոկոս ա-

ճում: Բացի այդ արդյունաբերության տեսակաբար կը-  
շիռն աստիճանաբար ավելանալու յեւ և ավելանում ե  
ժողովրդական տնտեսության մեջ:

Խորհրդային Հայաստանը ևս վողջ Խորհրդային  
Միության հետ միասին բռնել ե մեր յերկիրը արագ  
տեմպով ինդուստրիացման յինթարկելու ճանապարհը:

Սակայն մեր յերկրի ինդուստրիալիզացիակի ա-  
րագ քայլը միաժամանակ կախված է յեվ նրանից, քե-  
ինչ չափով յեվ ինչ արագությամբ և զարգանում մեր  
գյուղանետառյունը: Առանց գյուղատնտեսության, ա-  
ռանց անհրաժեշտ քանակությամբ հաց և կենսամթերք  
ունենալու և վերջապես առանց արդյունաբերության  
մի շարք կարևոր ճյուղերին հումնյութ (բամբակ, բուրդ,  
կաշի, ճակնդեղ և այլն) մատակաբարելը վոչ բանվոր  
դասակարգը կարող եր ապրել և աշխատել, և վոչ ել  
մեր արդյունաբերության այդ մի շարք կարևոր ճյու-  
ղերը (տեքստիլ և բրդի գործվածքի Փարբիկաները,  
շաքարի և կաշվի արդյունաբերությունը և այլն) կա-  
րող են իրենց աշխատանքը շարունակել և ընհակա-  
ռակը:

Դրա հետ մեկտեղ չպետք ե մոռանալ և այն, վոր  
գյուղատնտեսական մթերքներ և մեր արդյունաբերու-  
թյան անհրաժեշտ հումնյութ չունենալու կամ քիչ  
ունենալու դեպքում մենք ստիպված ենք ալս ան-  
գամ ևս մեր փողերն արտասահման ուղարկել և այն-  
տեղից այդ ապրանքներն ստանաը վորը նշանակում  
ե կրկին անգում տնտեսապես կապված լինել կապի-  
տալիստական յերկրներից:

Մեզ անհրաժեօթ և զարգացնել նայեվ մեր գյու-  
ղատնտեսությունը: Սակայն առանց արգյունաբերու-

բյան զարգացման չի կարող զարգանալ զյուղատեսեն-  
սուրյունը, վորովիենիվ առանց զյուղատեսենսական  
մեթենաների մենք չենք կարող զյուղատեսենսական  
զծով առաջ շարժվել, Յեվ ընդհակառակը՝ արգյունա-  
բերությունը յեվս չի կարող ափելի յերկար ժամանա-  
կով առաջ գնալ առանց զյուղատեսենսության:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր արդյունաբե-  
րության և գյուղատնտեսության առաջխաղացուն  
իրար հետ շաղկապված են և մեկը մյուսին լրացնում  
է, առանց մեկի չի կարող զարգանալ մյուսը:

Վերևում մենք արդյունաբերության արտադրան-  
քի զարգացման մասին խոսելիս ընդգծեցինք, վոր  
32—33 թվերին մեր արդյունաբերության արտադրան-  
քը զարգանալու և  $136^0/0$ -ով:

Հնդամյա պլանի համաձայն գյուղատնտեսության  
հինգ տարվա զարգացման համար տրամադրվելու յե  
մոտ 23 միլիարդ ռուբլի (23,2): Անցյալ հնդամյակում  
արամադրվել և 15 միլիարդ ռուբլի: Ներդրվելիք 23  
միլիարդ ռուբլին հնդամյակի վերջում տալու յե դրու-  
ղատնտեսական արտադրանքի արդյունք 50 տոկոսով  
(49,4) այն դեպքում, յերբ արդյունաբերությանը աը-  
րամադրված ընդամենը 16 ու կես միլիարդ ռուբլին  
տալիս և արդյունաբերական արտադրանքի աճում 136  
տոկոսով:

Արդյունաբերության և գյուղատնտեսության զար-  
գացման թափի մեջ այս խոշոր տարբերությունը բա-  
ցատրվում է մի շարք պատճառներով:

Պատճառներից մեկն այն է, վոր մեր արդյու-  
նաբերությունն իրենից ներկայացնում է մի հսկայա-  
կան խոշոր կոլեկտիվ տնտեսություն: Նրանում հա-

մախմբվել են տասնյամկ-հազարավոր և միլիոնավոր  
բանվորներ, վորպես մի ընտանիք, վորպես մի կոլ-  
լեկտիվ, այդ համախմբված բանվոր դասակարգն աշ-  
խատում և կոլլեկտիվ և միասնական ձևով մի ընդհա-  
նուր նպատակի համար:

Ենորհիվ հենց այդ հանգամանքի, ամբողջ ար-  
դյունաբերությունը ղեկավարվում է մի ընդհանուր  
ծրագրով, մի ընդհանուր կենտրոնացած պլանով:

Այնինչ գյուղատնտեսությունը արդյունաբե-  
րության միանգամայն հակառակ պատկերն է ներկա-  
յացնում: Այստեղ մենք չունենք խոշոր կոլլեկտիվ և  
համախմբված տնտեսություն, այլ ունենք մանր, բա-  
ժան-բաժան, ցաքուցրիվ անհատական գյուղացիական  
տնտեսություններ, անհատական, չքավորական, միջա-  
կային և կուլակային տնտեսություններ, վորտեղ ամեն  
մեկն աշխատում է իր համար և ամեն մեկն աշխատում  
է իր անհատական տնտեսությունը զարգացնել:

Պատճառներից մյուսն այն է, վոր արդյու-  
նաբերական ալդ խոշոր կոլլեկտիվներն աշխատում են  
խոշոր կատարելագործված և բարդ մեքենաների վրա,  
վորտեղ աշխատանքը կատարվում է մեքենաներով,  
վորտեղ գործում են հսկայական շարժիչ մեքենաներ,  
վորտեղ կտ ելեկտրական եներգիա և ալյն:

Այնինչ գյուղատնտեսության մեջ մենք չունենք  
խոշոր և կատարելագործված մեքենաներ, միայն վեր-  
ջին տարիներս ե, վոր խ. իշխանությունը կարողացել  
է գյուղին մատակարարել խոշոր քանակությամբ մե-  
քենաներ: Գյուղը գեռես նոր և սկսում ելեկտրիֆիկա-  
ցիայի լենթարկվել:

Դրությունն ավելի պարզ պատկերացնելու հա-

մար վերցնենք Հայաստանի միջանի գավառների հողամշակման միջոցները։ Հայաստանի ամենահայտնությանը է կենդանականի գավառն և հանդիսանում։ Նրա հողերի 86,6 տոկոսը գարվում և չութով։ Դարալազագի հողերի 90 տոկոսը, Լոռի. Փամբակի գավառի 54 տոկ., Զանգեղուրի գավառի 66 տոկոսը և Եջմիածնի գավառի բամբակի մշակության 48 տոկոսը։ Ահա թե ինչպես և դրությունը մեզ մոտ գյուղատնտեսական մեջենաների գործադրության տեսակետից։

Պատճառներից են նվազյալն այն և, վոր բանվոր դասակարգն ավելի կազմակերպված և գիտակից, ունի կոլեկտիվ աշխատանքի հսկայական փորձ, կուլտուրապես ավելի առաջադիմ և, ունի հեղափոխական անցյալի հսկայական փորձ, վորը գյուղացիուրյան նոծ մասսաների են դասանցած մեր յերկը, մեր արգյութաբերուրյան յեվ գյուղատնտեսուրյան զեկավար գերումն և գենվում։

Այնինչ գյուղացիությունն անկազմակերպ և կամ շատ քիչ և կազմակերպված, կուլտուրապես չափազանց յետ բանվոր դասակարգից, չունի կոլեկտիվ աշխատանքի և վոչ մի փորձ, չունի հեղափոխական այնպիսի անցյալ, ինչպես բանվոր դասակարգից։

Եեվ վերջապես պատճառներից վերջինն այն և, վոր արդյունաբերությունը լինելով մեր ժողովրդական ամբողջանահսության (արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը միասին վերցրած) ղեկավարող ճյուղը՝ ավելի արագ և զարգանում, քան գյուղատնտեսությունը։

Այս բոլորից ի՞նչ յիզրակացություն պետք և հանենք։ Արդյո՞ք մենք պետք և շարունակենք այնպիսի

գրությունը, ինչ վոր ներկայումս կա: Արդյոք արդյուն-  
նաբերությունը կարմղ և ավելի յերկար ժամանակ ա-  
ռաջ գնալ առանց գյուղատնտեսության զարգացման:   
**Մենք** վերեւմ արդին ասացինք, վոր այդ հնարա-  
վոր չե:

Այն ժամանակ հարց և առաջ գալիս՝ ինչպես  
դուքս գալ այս գրությունից:

## ԵԵԼ.ՔԸ ԽՈՅՈՐ ԵԵԼ ՄԵԶԵՆԱՅԱՅՄԱՆ ԵԵՆԹԱՐԿՎԱԾ ԽՈԲՀԲԴԱԾԻՆ ԿՈՂԵԿՏԻՎ ՑՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Այս գրությունից կարելի յե դուքս գալ այն ժա-  
մանակ, յերբ մենք գյուղատնտեսությունը ևս կրպեկ-  
տիվացման կենթարկենք, յերբ մենք այդ բաժան-բա-  
ժան սանր տնտեսությունները կմիացնենք և խոշոր  
կոլ: տնտեսություններ կկազմակերպենք: Յեկ վոր  
դլխավորն ե, մեքենայացման կենթարկենք կողեկտիվ  
խոշոր տնտեսությունները: Խակ այդ հնարավոր և միայն  
յերկու յեղանակով, իերկու ձեռվի:

Սուածին յեղանակն այն է, վոր մենք անսահ-  
ման արտօնություններ և իրավունքներ կտանք գյու-  
ղի կուլակներին, վաշխառուներին, վորոնք ունենալով  
իիջոցներ և հնարավորություններ՝ չքավորներին և մի-  
ջակներին շահագործման յենթարկելու միջոցով, կըս-  
տեղծեն խոշոր կուլակալին և կալվածատիրական  
տնտեսություններ, հետեապես և կլինեն գյուղի տե-  
րերն ու գյուղատնտեսության ղեկավարող ուժը: Պարզ  
ե, վոր այսպիսի խոշոր կուլակալին տնտեսություն-  
ները կկարողանան մեքենայացման յենթարկել գյու-  
ղատնտեսությունը և չքավորներին ու միջակներին

շահագործելու յեղանակով զարգացնել գյուղատնտեսությունը, բարձրացնել նրա բերքատվությունը և ավելի շատ արտադրել, քան թե այժմ:

Այս կնշանակեր խլել չքավոր և միջակ գյուղացիության ձեռքից Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, կվերականգներ քյոխվի պլետն ու ծեծը գյուղում, կվերադարձներ ցարական պրիստավին ու ժանդարմին և դաշնակցական խմբապետին մեր յերկրում և չքավոր ու միջակ գյուղացիությունը կուլակների ճանկը կգցեր:

Եերկրորդ յեղանակը կայանսւմ են նրանում, վորմենք գյուղի չքավոր և միջակ տնտեսությունները պետության և բանվոր դասակարգի ոժանդակությամբ աստիճանաբար և անշեղորեն միանգամայն կամավոր հիմունքներով կմիացնենք և խոշոր կոլեկտիվ տնտեսություններ կկազմակերպենք՝ հակադրելով այդ կոլլեկտիվ տնտեսությունները կուլակալին տնտեսություններին. Կազմակերպված կոլեկտիվ տնտեսությունները միացյալ ուժերով գյուղը մեքենացման կենթարկեն՝ զարգացնելով գյուղատնտեսությունը, բարձրացնելով բերքատվությունը և կարող են ավելի շատ արտադրել, քան թե այժմ:

Իրա հետ մեկտեղ, յերբ մենք կազմակերպենք նաև խոշոր պետական խորհրդալին տնտեսություններ «վորպես խոշոր գյուղատնտեսական ֆարմիկաներ» (16 կուսկոնֆերանս), վորոնք իրենց կազմակերպությամբ որինակ կդառնան շրջապատի ամբողջ չքավոր և միջակ գյուղացիությանը և բոլոր միջոցներով (մեքենաներով, լավորակ սերմերով, ազգոնոմիական և կուլտուրական ուժերով և այլն) կնպաստեն և անմիջա-

կան ոժանդակություն ցույց կտան վերջիններիս, մի բան, վոր բացակայում ե ներկա մեր խորհրդավին տնտեսություններում:

Այս կնշանակի մի անգամ ընդմիշտ գուրս քերել բաւրակությունը և ամբողջ չքավոր գյուղացիությունը կուլակների շահագործումից, միանգամայն բարելավել չքավոր և միջակ զյուղացիների ապրելու լեզանակները, նրանց տնտեսական դրությունը, փակել բոլոր ճանապարհները կուլակների առաջինազայրման առաջ և վերացնել ցարական կարգերը, ինչպես և դաշնակցական խմբապետիզմի վերադարձի բոլոր հնարավոր միջոցները մեր լերկրում:

Յուրաքանչյուր կոմիերիտականի համար միանգամայն պարզ ե, վոր մենք առաջին յեղանակը, առաջին նանապարհը չենք կարող յել չպիտի ընտենիք: Քանի վոր այդ նանապարհը մեզ յետ ե դարձնում դեպի նինը, դեպի միասպետական յել ցարական ուժիմը, դեպի միջակ յել չբավոր մասսաների շահագործումը, դեպի կուլակային յել կալվածատիրական իշխանուրյան վերականգնումը:

Ուրեմն մեզ մնում ե վերջին յել ամենանիշ նանապարհը, վորով մենք պետք ե առաջ գնանք անշեղորեն:

Այս տեսակետից մոր առաջ կանգնած ե գյուղատնտեսության վերակառուցման՝ կոլլեկտիվացման յենթարկելու կարևորագույն և դժվար աշխատանքը:

Այդ հիմնական սկզբունքից յեխելով կուսակցության 15-րդ համագումարը վորոշեց՝ «ներկա շրջանում մանը անհատական զյուղացիական տնտեսությունները խոշոր կոլլեկտիվներում միավորելու խնդիրը պետք ե գյուղում կուսակցության հիմնական խնդիրը համարի»:

Սրա հետ միասին տվեց «Գյուղ», նառաջ դեպի կոլեկ-  
տիվ տնտեսություն» լոգունդը:

Անշուշտ սխալ կլիներ կարծել, վոր կոմմունիստա-  
կան կուսակցությունը միայն 15-րդ համագումարում  
գլխի ընկավ, վոր անհրաժեշտ է կոլտնտեսություններ  
կազմակերպել, վոր անհրաժեշտ է գլուղը վերակա-  
ռուցել Այդ սխալ և անկատկած:

Սխալ և այն պատճառով, վոր դեռևս 15 րդ հա-  
մագումարից շատ առաջ և մինչև իսկ նախ քան կոմմու-  
նիստական կուսակցության կազմակերպումը մեր ա-  
մենատկանավոր առաջնորդները՝ Մարքսն ու Ենգելը  
և հետօգայում ել ընկ. Լենինն ասել և զբել են այն  
մասին, վոր սոցիալիստական նեղափակությունից նետ  
գյուղի ճանապարհը կոռպերացումն ու կոլեկտիվա-  
ցումն ե:

Այդ իսկ սկզբունքից լենելով՝ մեր կուսակցու-  
թյունն իր ծրագիրը մշակելիս (1919 թ. կուսակցու-  
թյան 8-րդ համագումարում) այդ ծրագրում կոնկրետ  
կերպով զբել և խոշոր գյուղացիական կոլտնտեսու-  
թյունների կազմակերպման խնդիրը:

Սրանով պետք ե բացատրել այն լերեսութը, վոր  
Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հե-  
տո և Հայաստանում Նոյեմբերյան հեղափոխությունից  
հետո արագործն իրար յետելից ծնունդ առան մի շարք  
գյուղատնտեսական կոմմունաներ: Հայաստանում 21—  
22 թվականներին նրանց թիվը հասնում եր 200-ի,  
սակայն այդ կոմմունաները շատ կարճ ժամանակից  
հետո քայլավեցին, կամ նրանցից շատ քչերը կարո-  
ղացան պահպանել իրենց գոյությունը:

Քայլավայման պատճառն այն է, վոր այն ժամա-

նակ մենք դեռևս նոր եյինք դուրս չեկել քաղաքացիական և իմպերիալիստական կոիմներից, թե մեր արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը գտնվում ելին ծալը աստիճան քալքարված դրության մեջ, ազգաբնակությունը սովոր յեր մատնված, զյուղացիներից և բանվորներից շատերը քաղցած ելին աշխատում։ Պարզ է, վոր այդ ժամանակ կազմակերպված կոմմունաները չելին կարող պահպանել իրենց գոյությունը և պետք է քալքայվելին, չունենալով նյութական բազա։

Իսկ 1927 թիվը բոլորովին ուրիշ բան եւ Այժմս վոչ մի համեմատություն չի կարելի դնել 19—20 և 21 թվերի հետո։ Մեր արդյունաբերությունն անցել եւ նախապատերազմյան չափից, զյուղատնտեսությունը նույնպես և այժմ զյուղացիությունը ինքն և մասսայական կերպով դնում կոլտնտեսությունների կազմակերպման խնդիրը։

Ուրեմն արսպես, կոլտնտեսությունների կազմակերպումը մեր կուսակցության առաջ դրվել եւ դեռևս շատ վաղուց, և միայն կուսակցության 15-րդ համագումարն այդ խնդիրը համարելով ել ավելի հասունացած, կոնկրետ կերպով դրեց կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպման խնդիրը։

Ցեվ իրոք, 15-րդ համագումարից հետո կոլտնտեսությունների արագ աճումը ցույց տվեց, վոր կուսակցությունը ժամանակին և ճիշտ եւ դրել այդ հարցը։

Կուսակցության 16-րդ կոնֆերանսն ընկ. Կալինինի զեկուցման առթիվ ամփոփելով կոլխոզ շարժման նվաճումները՝ արձանանադրեց հետեյալը. «Լիովին հավանություն տալով կոլխոզային շարժման նյութական և ֆինանսական աջակցության ասպարիզում կենտ-

կոմի կողմից կիրառված միջոցներին, կոնֆերանսն ընդգծում ե, վոր կոլխոզային շարժման ամբողջ կենսունակությունը ցուցադրող ամենաելական փաստն այն ե, վոր կոլխոզներն աճում են հենց իրենց գյուղացիական մասսաների ինքնազործունեյության յեվ նախաձեռնության հիման վրա, վոր խոշոր տնտեսության առավելություններն արդեն գտնում են իրենց արտահայտությունը կոլխիվում...

Ենդ ապա «Կոլխոզային շարժման կարևորագույն բացը նրա զարգացման ներկա շրջանում այն ե, վոր նրա կազմակերպչական ընդդրկումը և նրա տեխնիկական բազայի ուժեղացումն զգալի կերպով յետ և մընում ներքեվից յեկած շարժման ծավալից յեվ պահանջներից»:

Կոլխոզ շարժումն ընդամենը յերկու տարվա ընթացքում մասսայական ծավալ և ստացել:

## ԿՈԼԽԵԿՑԻՎ ՑՆԵՍԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵԵՎ ԳՈՅԻԴԻ ԿԱԽԾԿԱՑԻՒՆ ՏԱՐԵՐԻ

Մեր գյուղատնտեսության համար խոշոր և կոլխէկտիվ տնտեսությունների կազմակերպումն անհրաժեշտ ե և անհետաձգելի նախ այն պատճառով, վորպեսզի մենք կարողանանք ավելի արագ թափով զարդարացնել գյուղատնտեսությունը, ապա այն պատճառով, վորպեսզի կարողանանք մեր չքավոր գյուղացիներին դուրս բերել իրենց չքավորությունից: Իսկ չքավոր գըրությունից դուրս գտալու միակ յերեք կայանում ե չքավորների համախմբման մեջ կոլխէկտիվ տնտեսություններում միջակի հետ միասին, վորպեսզի հնարատվոր լինի նահապետական չութն ու արորը փոխարինել

տրակտորով և գութանով, վորպեսզի հնարավոր լինի  
գյուղատնտեսությունը մեքենայացման լենթարկել:


Եատ պարզ է, վոր մի չքավոր և միջակ տնտեսություն անհատապես չի կարող գյուղատնտեսական մեքենա ձեռք բերել սակայն նրանք կոլլեկտիվ ուժերով կկարողանան թե գութան և թե տրակտոր ձեռք բերել պետության և բանվոր դասակարգի ոժանդակությամբ: Ուրիշն չքավոր զբությունից դուքս գալու յելքը կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն եւ:

Խոշոր և կոլտնտեսությունների կազմակերպումը անհրաժեշտ է միաժամանակ նրա համար, վորպեսզի չքավոր և միջակ գյուղացիները կարողանան հետարգնետե բարեկալիք իրենց ապրիլու լեզանակը, կուլտուրապես առաջադիմել և դուքս գալ լայն ճանապարհ:

Ինչքան մենք շուտ կոլտնտեսություններին անցնենք, այնքան շուտ դուքս կբերենք բատրակներին և չքավորներին կուլակների շահազործումից, այնքան շուտ կչքանա կուլակների վոտքի տակի հողը:

Կուլակներն այս ամենը լավ են ըմբռնում ու հասկանում: Նրանք գիտեն, վոր կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը իրենց մահն և նշանակում, վորի համար նրանք ամենախիստ պայքար են ծավալել կոլտնտեսությունների դեմ:

Կուլակներն սկզբում սուտ լուրեր ենին տարածում չքավոր և միջակ գյուղացիության մեջ, թե կոլլեկտիվ տնտեսություններում ամեն ինչ կոլլեկտիվացնելու լին, մինչև անգամ այնտեղ կանայք նույնպես ընդհանուրի սեփականություն են դառնալու, վոր կոմմունիստները խաբում են չքավորներին և միջակ-



Ներին, վորապեսզի հետագայում խլեն նրանց հողերը և  
ալլն և ալլն:

Այս պրովոկացիան սկզբնական շրջանում վորոշ  
ազգեցություն ունեցավ մի շարք առեղերում. միջանի  
կոլեկտիվների անհատ գյուղացիները, ընկնելով կու-  
լակների ազգեցության տակ, դուրս յեկան կոլեկտիվ  
տնտեսությունից. Բայց շնորհիվ մեր կուսակցության  
և իշխանության ձեռք առած միջոցներին և մեր բջիջնե-  
րի բացատրական լայն աշխատանքներին, մեզ հաջող-  
վեց կարճ ժամանակամիջոցում հականարկած տալ կու-  
լակներին և ամրապնդել կոլանտեսությունները:

Կուլակները տեսնելով, վոր պրովոկացիայի մի-  
ջոցով չկարողացան կանգնեցնել կոլեկտիվների աճումը,  
և ընդհակառակը՝ կոլեկտիվներն սկսեցին ավելի ուժեղ  
թափով կազմակերպվել, արս անգամ նրանք արդեն  
դիմեցին ավելի խիստ միջոցների: Ռուսաստանի մի  
շարք վայրերում կուլակները կրակ տվեցին մի շարք  
կոլեկտիվ տնտեսությունների ունեցվածքը և սպանե-  
ցին միջանի կոլխոզների նախագահներին, ինչպես և  
սպառնալով կոլեկտիվների մեջ մանող գյուղացիներին:

Հայաստանում կուլակները նույնպես ակտիվ պար-  
քար են մղում կոլեկտիվների դեմ. սրանից միջանի  
ամիս առաջ Ղուրդուղուցի շրջանում կուլակները ծե-  
ծել ելին կոլեկտիվներից մեկի նախագահին: Մի այլ  
տեղ կուլակներն սպառնալիքով առաջարկել են կոլ-  
եկտիվի անգամներից յերկուսին դուրս գալ կոլեկ-  
տիվից և այլն: Սակայն այս միջոցն ել նրանց չոգնեց:

Կուլակները տեսնելով, վոր այս միջոցն ել ոգուա  
չտվեց, այժմ այլ մեթոդների լեն դիմում: Նրանք աշ-  
խատում են մտնել կոլեկտիվ տնտեսությունների մեջ

և ներսից պալթեցնելու քայլալի կոլտնտեսությունները։ Մի շաբաթ տեղերում այդ նրանց հաջողվում են մեր կազմակերպությունների թույլ աշխատանքների պատճառով։ Վորոշ տեղերում նրանք կարողանում են կեղծ կոլտնտեսություններ կազմակերպիլ և այդ նըստատակի համար հող և վարկ ստանալ։ Նրանք բոլոր միջոցները ձեռք են առնում և աշխատում՝ են չքավորական և միջակային կոլեկտիվները դարձնել կուլտակային կոլեկտիվներ։ Նրանք վարկաբեկում և գյուղացիության աչքում գցնում են կոլեկտիվների հեղինակությունը և նշանակությունը։

Մեր գլուղական բոլոր կազմակերպությունների, առավել ևս կոմիտեի տական բջիջների պարտականությունն են անխնա պայքար մղել կուլտակների գեմ։ Նըստանց բոլոր ոյինքաղություններին պետք և վճռական հակահարված տալ, համապատասխան մարմինների միջոցով չպետք և թույլ տալ, վորպեսզի կուլտակները կոլեկտիվներ կազմակերպեն։ Որենողքական կարգով պատասխանատվության պետք և յենթարկել այն բոլոր կուլակներին, վորոնք մնաս են հասցնում կոլտընտեսություններին։

Այս բոլորի հետ մեկտեղ մեր կոլեկտիվների գըստները պետք և ամուր փակել նրանց առաջ և վոչ մի ճեղք չթողնել, վորպեսզի կուլակները չկարողանան ներս խցկվել։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կոլխոզ շարժումն արագ թափով առաջ և գնում գյուղում դասակարգային պայքարի սրված միջավայրում։

Ինչքան կոլտնտեսությունների շինարարության թափն արագանա, այնքան կուլակներն ավելի կատա-

դի պալքար պետք և սկսեն կոլխոզ շարժման դեմ, չը-  
քավոր և միջակ գյուղացիների դեմ, քանի վոր կոլ-  
լեկտիվ տնտեսությունների կազմակերպութիւն ել ավելի  
մոտեցնում և կուլտակներին իրենց գերեզմանի դուանը:

Կասկածից դուրս ե, վոր չքավոր և միջակ գյու-  
ղացիությունը կոմկուսի ղեկավարությամբ վոչ մի դըժ-  
վարության առաջ կանգ չի առնելու և կուլտակների հետ  
յեղած պալքարից դուրս կդա լիակատար հաղթանա-  
կով՝ առաջնորդելով մեր գյուղը սոցիալիստական ճա-  
նապարհով:

## ԳՅՈՒՂԻ ԿԱԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՅԵԼ ԱՀ ԹԵՇՄԸ ԿԱԼՄՆԵԿԻՑՆԵՐԸ

Ասացինք, վոր մեր կուսակցությունն ու իշխա-  
նությունն ամենավճռական կերպով զրել են մեր լեր-  
կիրն ինդուստրիալիզացիայի լենթարկելու խնդիրը: Այդ  
ասպարիզում յեղած նվաճութներն արդեն ցուց են տա-  
լիս, վոր այդ քաղաքականությունը միանգամայն ճիշտ  
և պետք է շարունակել անշեղորեն: Պետությունն  
այժմս խոշոր գումարներ և ծախսում ալդ նպատակ-  
ների համար: Մենք ասացինք նաև այն մասին, վոր  
պետք և զարդացնել գյուղատնտեսությունը նույնպես,  
վոր գյուղատնտեսությունը յետ և մնում արդյունա-  
բերությունից, վոր մենք անցյալ տարի հացի վորոշ  
պակաս զգացինք և այժմ ել գյում ենք:

Մենք ասացինք նաև այն մասին, վոր գյուղատնտե-  
սությունը կարող է դուրս գալ այդ դրությունից խո-  
շոր կոլլեկտիվ և խորհրդային տնտեսություններ կտպ-  
մակերպելով, վորոնց պետք և անպայման ոժանդակի  
պետությունը:

Սակայն չպետք է լերբեկիցն մոռանալ, վոր մեր

արդյունաբերության զարգացման արագ թափը և գյուղատնտեսության կոլեկտիվացումն այնպես «իսաղող» ճանապարհով և առաջ դնում, վոնց վոր ասում են, ոմեր ճամպեն դուզ ա մինչև սոցիալիզմը:

Մենք քաղաքում և գյուղում ունենք դասակարգային թշնամիներ—նեպմաններ, առետրականներ, նախկին բուրժուաններ, գյուղի կուլտակներ, վաշխառուներ և այլն, վորոնք հեղտությամբ իրենց դիրքերը չեն զիջում:

Մեր արդյունաբերության զարգացումը և գյուղատնտեսության զարգացումը սրում և քաղաքի նեպմանների, առետրականների և, մի խոսքով, կապիտալիստական ելեմենտների պայքարն ընդդեմ քաղաքացիների գյուղի կուլտակության պայքարն ընդդեմ չքաղաք-միջակ գյուղացիության մլում կողմից: Այնպես, ինչպես բանվոր դասակարգը միանալով չքավոր և միջակ գյուղացիության հետ՝ պայքար և մղում քաղաքի և գյուղի բուրժուանների դեմ, այնպես ել քաղաքի նեպմանը և առետրականը դաշն և կապել գյուղի կուլտակի հետ միացյալ ուժերով պայքարելու բանվոր դասակարգի և չքավոր ու միջակ գյուղացիության դեմ:

Մեր սոցիալիստական շինարարության հաղթական վերելքի հանդեպ նահանջող դասակարգային հակառակորդ ուժերի պայքարն ալսպես սուր և դառնում:

Այնպես վոր ինչպես գյուղի կոլեկտիվացումը, նույնպես և քաղաքի արդյունաբերության զարգացումը և առհասարակ մեր ամբողջ աշխատանքներն առաջ են գնում դասակարգային կատաղի պայքարի կրակի տակ և միահամուռ դժվարություններով:

Սակայն դեռ սա չի նշանակում, վոր առհասարականվերջ, և մինչև սոցիալիզմին հասնելը նույնիսկ, ել ավելի պետք ե սրբի դաստիարդային պայքարը մեզանում, ինչպես դրանում ուզում են «մեղաղբել» կուսակցությունը աջ՝ ուղղողիցիայի կողմանակիցները:

Խնդիրը նրանումն ե, վոր ներկայումս գյուղական կուլտկների (ինչպես և քաղաքի կապիտալիստական ելեմնների) ամենաակտիվ պայքարը խորհրդային իշխանության վեմ վոչ թե հետեւանը ե նրանց ուժեղացման, այլ, ընդհակառակը, նրանց թուլացման: Կուլակները կոլլեկտիվներ են ալլում, չքավորներին և բատրակներին վախեցնում և ծեծում են, կամ մեր լավագույն գյուղական աշխատավորներին տերը որի յենթարկում վոչ թե նրա համար, վոր նրանք ավելի ամրապնդվել են և ուժեղացել այլ հատկապես նրա համար, վոր այդ կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը և առհասարակ մեր ամբողջ շինարարական աշխատանքները գյուղում քայքայում են կուլակային տնտեսությունները, քայլակում են նրա վոտքի տակի հողը: Միթե միանգամայն պարզ չե, վոր յուրաքանչյուր մի նոր կոլլեկտիվի կազմակերպումն իր մեջ ընդգրկելով այն բատրակ և չքավոր գյուղացիներին, վորոնք մինչ այդ այսպես թե այնպես շահագործվում եյին կուլակների կողմից (նրանցից փող, հացահատիկ ելին վերցնում մեկին յերկու վերադիրով, վորպես բատրակ շահագործվում եյին նրանց մոտ), զրկում են կուլակային տնտեսություններին վերջիններիս շահագործվումից: Յեզ միթե միանգամայն պարզ չե, վոր կուլակային տնտեսությունը զրկվելով շահագործվումից՝ պետք ե աստիճանաբար քայքայվի:

Յեվ ահա հենց դրա համար ել կուլակները կատաղի պայքար են մղում իրենց գոյության պահպանման համար։

Ցեվ վերջապես չե՛ վոր տնտեսապես աստիճանաբար քայքալվող կուլակը և մեր դաստիարակյին թշնամիները հետագալում վոչ մի լուրջ ընդդիմառություն չեն կազող ցուց տալ մեր առաջնադաշտները Ալսպիս, ուրեմն, կուլակների ակտիվ պատքարը ծրագր դեմ ցուց ե տալիս, վոր վոչ թե նրանք են ամպնդվում, այլ ընդհակառակը, դուռդի սոցիալիստարությն տարրերը։

Աշխատանքն կողմնակիցները չկարողանալով համաշխափի առնել և ըմբռնել մեր ապրած ներկա շրջանը և համարակալով դասակարգալին պայքարի սրումից ու միաժամանակ տեսնելով մեր դժվարությունները՝ թե դրույղատնտեսության ասպարիզում (հայի պակասը, դրույղատնտեսության հետամնացությունը և տլլն) և թե արդյունաբերության մեջ (արդյունաբերական ապրանքների սպառման ժամանակավոր սովը)՝ գալիս են այն յեղբակացությունն, վոր կուսակցությունը շեղվել ե իսկական նանապարհից, վոր կուսակցությունն սխալ քաղաքականությունն ե վարում դյուդում, վոր գյուղատնտեսության հետամնացության պատճառը կուսակցության վարած սխալ գծի հետեւգանքն ե, և վոր մեր գյուղատնտեսության անումը դեպքադաշիայի (յետ անման) ե յենթարկվել յեվ յետ ե գնում։

Աջերը մեր սոցիալիստական տարրերի դարձացման հետեւանքով կուլակային տնտեսությունների արդեն իսկ վորոշ մասի ընկնելը, նրանց մասնակի

քայքայումը (կուլակները մասնակի կերպով կրճատում են ցանքսերի տարածությունը, ծախում են իրենց անասունները և այլն) բացատրում են ամբողջ գյուղատնտեսության անկումով և կանգառումով:

Այստեղից լենելով՝ աջերը դեմ են դուրս գալիս կուսակցության գյուղում տարվելիք հիմնական գծին, կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպմանն, առաջարկելով թուլացնել կոլտնտեսությունների շինարարությունը և հիմնական ուշադրությունը դարձնել վոչ թե կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների կազմակերպման վրա, այլ ընդհակառակը, անհատական միջակային և կուլակային տնտեսությունների վրա:

Աջ թեքման կողմանակիցներից ընկ. Ֆրումկինը հետևյալ ձեռվ ե դնում խնդիրը իր կենտկոմին գրած նամակում. «Զպետք ե արտակարգ և հարվածային կերպով ծավալում տալ կոլեկտիվ տնտեսություններին և խորհրդային տնտեսություններին... վոր կոլեկտիվ տնտեսություններն իրենց մթերքները շուկա հանելու տեսակետից. չեն կարող առաջ անցնել գյուղացիական տնտեսություններից»:

Ընկեր Ֆրումկինի տսելով դուրս ե գալիս այն, վոր խորհրդային իշխանությունը . զորով կոլեկտիվ տնտեսություններ և կազմակերպում: Յուրաքանչյուր կոմիերիտական անգամ գիտե, վոր կոլտնտեսությունների. կազմակերպումը տարվում ե միանգումայն կամավոր հիմունքներով, և չքավոր ու. միջակ գյուղացիությունը, ինչպես 16. ըդ կոնֆերանսն և արձանագրում, ինքը մասսայական կերպով դիմում ե կոլտընտեսությունների կազմակերպմանը:

Իսկ ինչ վերաբերում ե այն բանին, վոր կոլ-

և խորհրդային տնտեսությունները չեն կարող առաջ անցնել անհատական գլուղացիական տնտեսություններից, դա արդեն բամբասանք ե՝ ուղղված կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների գեմ, քանի վոր թվերը միանդամալն հակառակն են ապացուցում:

Այսպես, որինակ՝ կոլեկտիվ տնտեսությունների ցանքսաղաջտերի տարածությունը 26—27 թ. հավասար լինելով  $870,000$  հեկտարի (հեկտարը մոտավորապես մեկ դեսիմետրինի լե հավասար), 27—28 թ. այդ թիվը հասնում է մեկ միլիոն  $700,000$  ( $1,700,000$ ) հեկտարի, Կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների արտադրածի քանակը 26—27 թ. կազմում եր 292 միլիոն ռուբլու, իսկ 27—28 թ. 401 միլիոն ռուբլու, այսինքն մեկ տարվա մեջ արտադրանքն աճել է 37 տոկոսով: 28—29 տարվա վերջին կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների արտադրանքը կազմելու յե ամբողջ գյուղատնտեսության արտադրանքի մոտ 9 տոկոսը:

Իսկ 1933 թ. նույն այդ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ցանքսաղաջտերի տարածությունը հասնելու լե 26 միլիոն հեկտարի, վորը կազմում է ընդհանուր ցանքսաղաջտերի 17 ու կես տոկոսը: Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների արտադրանքը 33 թ. կազմելու լե ամբողջ գյուղատնտեսության արտադրանքի 15 ու կես տոկոսը, իսկ հաշահատիկալին ապրանքային (շուկա դուրս բերելու) արտադրանքի 43 տոկոսը: 32 թ. կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները միասին տալու յեն 500 միլիոն ֆթից ավելի ապրանքային հաց:

Վերոհիշլալ թվերն ապացուցում են, վոր խոր-

հըրդաւին և կոլեկտիվ տնտեսությունները տարեցտարի առաջ են գնում, և աջերի հայտարարությունն այն մասին, թե նրանք վոչ մի տուավելություն չունեն անհատական տնտեսություններից, վոչ մի հիմք չունի և անտեղի դրաբարություն եւ:

Աջերի մեկ ուրիշ այլելի ականավոր ներկայացուցիչ «Պրավդա»-ըում գրում է հետևյալը. «Կոլխոզները մեծ դեր են կատարում. դա անկասկած ե. մենք պետք են նրանց ոժանդակենք: Բայց չի կարելի պնդել, վոր դա այն գլխավոր ճանապարհն ե, վորով գյուղացիական մասսաները կընթանան դեպի սոցիալիզմը: Մենք պետք են քարշ տանք գյուղացիությունը գեղի սոցիալիզմը՝ կառչելով (ամուր բռնելով) նրա մասնատեսական շահերին:

Բանից դուքս ե գալիս, վոր մենք գյուղացիությունը դեպի սոցիալիզմ պետք ե առաջնորդենք վոչ թե կոոպերացման և կոլեկտիվացման միջոցով, ինչպես մեզ այդ սովորեցրել ե ընկ. Լենինը, այլ ընդհակառակը, «քարշ տանք գյուղացիությունը դեպի սոցիալիզմ, յելնելով նրանց անհատական մասնատեսական շահերից», այսինքն հիմք ընդունել վոչ թե կոլեկտիվ, այլ անհատական տնտեսությունը: Պետք ե ասել, սակայն, վոր այսպիսի կարծիքի հետ համաձայն կինեն սեր բոլոր կուլակները: Հենց կուլակների ցանկությունն ել այդ եւ նրանք պահանջում են իրենց ևս մասնակից գարձնել սոցիալիզմի կառուցմանը, վոր իրենք գեմ չեն սոցիալիզմին և այն, միայն թե թուլլ տրվի իրենց ևս զարգանալու:

Այս տեսակետը ելավելի զարգացնելով՝ ֆրումկինը  
15-ին հուլիսի 28 թ. իր՝ ենթակոմին գրած մեկ ուրիշ

նամակում գրում ե. «Ամբողջ կուսակցական կազմակերպությունը պետք է իրեն պարզ հաշիվ տա, վորամբն մեկ միլիոն փութ եաց, ինչ խմբից ել վոր նաև առաջվելիս լինի (արտինքն չքավորից, միջակից թե կուլակից՝ մինույն ե—Ռ. Հ.) ամրացնում ե պըոլետարիաթի դիկտատուրան, իսպուսարիացումը, և յուրաքանչյուր կորցրած միլիոն փութ եաց թուլացնում ե մեզ։ Կամ թե չե՞ «Մենք չպետք և խանգարենք նայել կուլակային տնտեսությունների արտադրությանը»։

Այսպես, ուրեմն, ընկ. Ֆրումկինը, ինչզես և աջ ուղղողիցիալի կողմեակիցները պահանջում են, վորապեսզի մենք չխանգարենք կուլակային տնտեսությունների զարգացմանը։ Նրանք չեն հավատում և հույս ել չունեն, վոր կոլեկտիվ և խորհրդակին տնտեսությունները մեզ մոտ արագ թափով զարդանում են, վոր դյուզատնտեսության ասպարիզում նկատված դժվարություններից գույնս գալու յելքը կոլեկտիվ և խորհրդակին տնտեսությունների կազմակերպումն եւ

Ընդհակառակը, նրանք առաջարկում են չխանգարել կուլակային տնտեսությունների զարգացմանը։ Իսկ մենք գիտենք, թե ինչ և նշանակում չխանգարել կուլակային տնտեսությունների զարգացմանը։ Դա նշանակում է բաց թողնել կուլակների սանձեցը, վորապեսզի նրանք անխնա շահագործեն չքավոր և միջակ դյուզացիությունը։

Աջերը մոռանում են, վոր մեր դժվարությունների պատճառներից մեկն ել կուլակների գոյությունն ե գյուղում, վորոնք ամեն կերպ խանգարում են մեր առաջխաղացմանը։

Ընկ. Ֆրումկինի համար միանգամայն մինույն

ե, թե մեզ հաց տվողը վոր շերտն ե՞ չքավոր, միջակ թե կուլակը։ Իսկ մեզ համար բոլորովին ել միեւնույնը չե։ Մեզ վոչ մի դեպքում ձեռնտու չե, և մենք վճռականապես պետք ե հրաժարվենք այն քաղաքականությունից, վոր մեր հացը, ինչպես և գյուղատընտեսական ալլ մթերքների մատակարարումը, գտնվի կուլակների ձեռքին։

Մենք շատ լավ ենք հիշում այն ժամանակը, յերբ հացի և գյուղատնտեսական մթերքների մատակարարումը գոտնվում եր կուլակների ձեռքին։ Մենք այդ քաղաքականությունը չենք տանելու։ Մեր քաղաքականությունը լինելու յէ անխնա պայքար կուլակների դեմ բոլոր ասպարեզներումն կուլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների կազմակերպումը գյուղում։

Այսպիսով աջ թեքման կողմնակիցները պահանջում են՝ դադարեցնել կու. յեվ խորհրդային տնտեսությունների զարգացումը, չխանգարել կուլակային տնտեսությունների զարգացմանը, արտոնություններ տալ կուլակային տնտեսություններին յեվ հիմնականում դնել անհատական տնտեսության զարգացման խնդիրը։

Դնելով կուլեկտիվ և խորհրդային տնտեսությունների կազմակերպման խնդիրը վորպես ամենակտրեվոր աշխատանքը գյուղում՝ մենք դրանցվ ել ավելի ամրապնդում ենք բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Թեթե մինչև վերջին տարիները գյուղացիությունը գնում ե բանվոր դասակարգի յետեից, նրա համար, վոր շնորհիվ բանվոր դասակարգի ոժանդակության նա կարողացավ բնաջինջ անել կալվածատիրությունը մեր յերկրում և գրավել կալ-

վածատիրական ու կուլտկալին հողերը և տալա այնու-  
հետեւ մեր արդյունաբերության և գյուղատնտեսական  
ապրանքների փոխանակության հիման վրա ամրա-  
ցավ բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության  
հետ, այժմ արդեն, յերբ մենք վերականգնելով մեր  
գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը՝  
մտնում ենք բոլորովին նոր շրջան—վերակառուցման  
շրջան, — և յերբ գյուղացիությունը դեռ շատ վաղուց  
մոռացել և կարվածատերերի հողերի գրավման և իր  
տնտեսության վերականգնման ասպարիզում բանվոր  
դասակարգի ցույց տված սժանդակությամբ, — այժմ  
բանվորա գյուղացիական դաշինքն ել ավելի կարող և  
ամրանալ և պահպանվել այն գեղքում, յերբ բանվոր  
դասակարգը սիստեմատիկ ոգնություն ցույց տա  
գյուղացիությանը նոր ծեվերով:

Բանվոր դասակարգի կողմից գյուղացիությանը  
ցույց տրվելիք նոր ձևերը, արտադրական յեղանակ-  
ները կարանում են հենց այդ կոլեկտիվ և խորհրդա-  
յին տնտեսությունների կազմակերպման, գյուղին  
մեքենաներ ու արակտորներ տալու և այլ միջոց-  
ների մեջ:

Միանգամայն պարզ ե, վոր յեթե աջ թեքման  
կողմանակիցները փաստորեն դեմ են գուրս գալիս խոր-  
հըրդային և կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպ-  
մանը, նրանք միաժամանակ չեն ըմբռնում բանվորա-  
գյուղացիական դաշինքի ամրապնդման ներկա ձևերն  
ու յեղանակները և չեն հասկանում, վոր այժմ միմիայն  
արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանք-  
ների փոխանակությամբ բանվոր դասակարգը կտրող  
և իր յետեից տանել գյուղացիությունը:

Արդյունաբերության վերաբերյալ աջ թեքման կողմնակիցները պահանջում են, վորպեսզի մենք վերագննենք մեր ինդուստրիալիզացիայի քաղաքականությունը, թուլացնենք նրա զարգացման տևմալը, զարկ տանք ավելի շատ թեթև արդյունաբերությանը, վորպեսզի վերացնենք նկատելի ժամանակավոր ապրանքային սովը։ Աջ թեքման կողմնակիցները միանդամայն մոռացության ևն տալիս այն հանգամանքը, վորթեթև արդյունաբերության զարգացումն ևս իր հերթին կախված է մեր ծանր ու խողոր արդյունաբերության զարգացումից։ Յեթև մենք չունենանք մեքենաներ պատրաստող արդյունաբերություն, սուիպված պետք ե լինենք մեր թեթև արդյունաբերության մեքենաներն արտասահմանից բերել տալ։

Աջ թեքման կողմնակիցները հարայիրոց են բարձրացնում այն մասին, վոր իբր թե խ. իշխանությունը ոգյուղացիության ռազմա-ֆեռղալացման շահագործման ե յենթարկում», այսինքն ֆեռղալների, կալվածատերերի նման անխնա կերպով շահագործում են գյուղացիությունը։ Սա ալսպիսի մի տեսակետ ե, վորին միայն կհամաձայնվելին մեր բոլոր կուլակները և մեր դասակարգային թշնամիները։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր աջ թեքման կողմնակիցները մեր յերկրի ներսում յեղած կապիտալիստական տարրերի տռաջ, նահանջելու ճանապարհն են բռնել յեվ նրանց ցանկացածն են ուզում կիրառել կյանքում։

Միտնգամայն պատահական չեր, վոր վերջին խորհուրդների ընտրությունների ընթացքում միքանի տեղերում կուլակներն առաջարկել ելին պատվավոր հախագահ ընտրել ընկ. Թրումկինին։

Հարց ե ծագում՝ վիշտեղից են առաջ գալիս այս  
տրամադրությունները մեր կուսակցության մեջ:

Այդ տրամադրությունները և տեսակետները  
հանդես են գալիս և իրենց տեղն են դանում մեր կուսա  
կցության վորոշ անդամների մեջ հետեւալ պատճառ-  
ներով:

Ասացինք, վոր մենք զյուղում բացի կովեկտիվ  
և խորհրդային տնտեսություններից ունենք նաև ան-  
հատական—չքավորական, միջակալիին, ունեորական և  
կուլակալին տնտեսություններ: Իսկ քաղաքում, բացի  
արդյունաբերությունից և կոռագերացիալից, արհեստա-  
վորական և տնայնագործական տնտեսություններ,  
առևտրականներ, նեպմաններ, նախկին չինոմիկիններ,  
կուր ընկած գաճառականներ և խորհրդային իշխա-  
նությունից դեռ են գլխից գժգոհ մարդիկ: Ասացինք  
նաև, վոր մեր տնտեսության զարգացման և մեր բո-  
լոր աշխատանքները մենք տանում ենք զյուղի և քա-  
ղաքի կապիտալիստական ելեմենտների հետ պայքար  
մղելու և նբանց վերջնական մահ բերելու ճանապար-  
հով: Վոր այդ կապիտալիստական տարրերը (կուլակ-  
ները, նեպմանները) մինչեւ այժմ չտեսնված յեվ  
կատաղի պայքար են մղում խորհրդային իշխանու-  
թյան դեմ և այլն:

Յեվ վորովհետեւ կոմմունիստական կուսակցու-  
թյունը մեկուսացված (կտրված), առանձնացած չի  
այն միջավայրից, վորի մեջ նա ապրում ե, ապա և  
միանգամայն պարզ ե, վոր այդ բուրժուական և մա-  
նըր-բուրժուական միջավայրը պետք ե ազդի նաև կու-  
սակցության անկայուն շերտերի վրա:

Յեթե սրա վրա ավելացնենք նաև այն, վոր

վերջին տարիները այս կամ այն կերպ կուսակցության շարքերն են մտել վորոշ քանակով մեզ միանգամայն խորթ և անհարազատ անձնավորություններ, վորոնք իրենց տնտեսական դրությամբ և իրենց տեսակետներով ավելի մոտիկ են կուլակներին, քան թե մեր կուսակցությանը, վորոնք կուլակների ևնեղմանների տեսակետներն են արտահայտում և պաշտպանում, — հարցը միանգամայն պարզ կլինի:

Այս ըոլորի հետևանքը լինում է այն, վոր կուսակցության մեջ հանդես են դալիս այնպիսի ընկերներ, վորոնք, ճիշտ ե, միանգամից չեն պահանջում զինաթափվել կուլակների և նեպմանների առաջ, այլ առանձին կուլակային տնտեսություններին արտոնություն տալու, կոլխոզնարությունը դադարեցնելու և արդյունաբերության տեմպը դանդաղեցնելու պահանջն են դնում, սակայն նրանց քաղաքականությունը տանում է մեզ դեպի կուլակների և նեղմանների առաջ զինաթափափելը:

Ահա թե վորտեղից ե առաջ դալիս աջ թեքումը մեր կուսակցության մեջ:

Ինչոք ե վորանգավոր վերջին հաջով աջ թեքումը:

Ըստալինն այս հարցին պատասխանելով ասում ե. «Յեթե նա (աջ թեքումը) հաղթող հանդիսանա մեր կուսակցութան մեջ, դա կլինի մեր կուսակցության գաղափարական կործանումը, կապիտալիստական ելեմենտների ազատ զարգացումը և կապիտալիզմի ռեստավրացիա (վերականգնումը) — ահա թե ինչ վորանգ ե սպառնում մեզ աջ թեքումը, յեթե նա հաղթանակի: Դրա համար ել աջ թեքման դեմ

անխնաս պայքար պետք և հայտարարել և պարզաբանել մասսաներին աջ թեքման եյությունը:

Մեր բջիջներն ու կոմիերիտականները պետք են պալքարեն վոչ միայն աջ թեքման դեմ, այլ և բոլոր նրանց դեմ, վորոնք հաշտվում են աջ թեքման հետ և նրանց դեմ պալքար չեն մղում, վորովհետեւ ով չի պայքարում աջ թեքման դեմ և հաշտվողական քաղաքականություն և տանում նրանց նկատմամբ, նա նույնպես աջակցում և ոջ թեքմանը և կողմնակից և կապիտալիզմի վերականգնմանը մեր յերկրում:

**Բ. ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՀՄ-ՈՒՄ  
ՑԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ**

**ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Խ. ՄԻԱԽԹՅԱՆ ՄԵԶ**

Խորհրդային Ռուսաստանը կոյլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն ավելի շուտ և սկսել քան թե Հայաստանը։ Այդ իսկ տեսակեաից նա ունի աշխատանքի մեծ փորձ, և կոլլյոդ շարժումը համեմատական չափով ավելի լավ հիմքերի վրա լի գրված։

Կոլտնտեսությունները Խորհրդային Միության մեջ աստիճանաբար աճում են։ Աճում են նաև ցանքսային տարածությունները։ Ներքեւ բերած ազգուստակը ցույց և տալիս այդ աճումը։

Տարիները	Կոլտնտեսությունների քանակը	Ընդդրիկած տընթառությունը	Ցանքագաղտնակը	Զիերի քանակը	Խոշոր լեղջյուղավորականություն
1926 թ.	15,055	216,100	124,600	975,700	135,900
1927 »	15,675	244,200	125,300	887,100	139,000
1928 »	32,506	405,600	176,200	1,770,000	222,900

Ինչպես թվերը ցույց են տալիս, ամենից շատ կոլլեկտիվ տնտեսություններ կազմակերպվել են 1928 թվին,

այսինքն 15-րդ համագումարից հետո, լեռք կուսակցությունն ավելի վճռական կերպով դրեց գլուզի կուլիկատիվացման խնդիրը։ Մոտակա տարիներում կուտնահսությունների թիվը ավելի բուռն կերպով աճելու յի և միքանի տարուց հետո մենք կոլեկտիվներում կունենանք միքանի միլիոն գլուղացիական։ տնտեսություններ, վորոնք միացյալ ուժերով միանգամայն կվերակառուցեն մեր գյուղն ու գլուղատնտեսությունը։ Յեվ այսուհետեւ աստիճանաբար ամրող գլուղատնտեսությունը կոլեկտիվացման կենթարկվի։

Անցյալ տարի հունիս ամսին Մոռկվայում տեղի ունեցավ կոլեկտիվ տնտեսությունների համամիութենական 1-ին համագումարը։ Այդ համագումարն այն նշանակությունն ունեցավ, վոր նա առաջին անգամ իմի ամփոփեց Խորհրդավիճ Միության բոլոր կուլեկտիվ տնտեսությունների աշխատանքի փորձը և, վոր գլխավորն ե, ցույց տվեց այն ձևերն ու միջոցները, վորի միջոցով պետք ե առաջ շարժվեն կոլեկտիվ տնտեսություններ։

Համագումարն իրեն վորոշումների մեջ մինչ այժմ յեղած փորձի հիման վրա մի շարք կոնկրետ վորոշումներ և կարագրել կոլտնտեսությունների աշխատանքների միքանի ասպարեզների մասին։

Մեր կոլեկտիվի անդամներից ամեն մեկը, առավել ևս կոմյերիտականներն անպայման պետք է կարդան և լուրացնեն այդ վորոշումները և պարզաբանեն կոլեկտիվի մյուս անդամներին և գյուղացիությանը։

## ԿՈՂԵԿԹԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում կողեկտիվ տնտեսությունների կաղմակերպումը փաստորեն սկսվել է 15-րդ համառ գումարից հետո, այդ պատճառով ել մենք կոլտնտեսության շինարարության ասպարիզում չափազանցքիչ փորձ ունենք: Ուստի և պետք ե լրիվ կերպով ոգտագործենք մեր հարեւան հանրապետությունների և հատկապես Ռուսաստանի փորձը:

Բացի այն բանից, վոր մենք կոլտնտեսությունների կաղմակերպումն ավելի ուշ ենք սկսել և անհրաժեշտ փորձ չունենք, Հայաստանում ունենք նաև մի շարք դժվարություններ, վորոնք ել ավելի դժվարացնում են մեր աշխատանքն այդ ասպարիզում:

Այդ դժվարությունները կայանում են նրանում, վոր Հայաստանը իմպերիալիստական, ազգամիջյան և քաղաքացիական կռիջների պատճառով շատ խիստ կերպով քայլալվեց, գյուղացիության մեծ մասը վերին աստիճանի աղքատացավ, և դյուղատնտեսությունն ընդհանրապես շատ լեռ մնաց:

Չնայած խորհրդացին իշխանության վերջին ինն տարվա ձեռք առած լեռանդուն միջոցներին՝ մեր գյուղատնտեսությունն ընդհանրապես զերևս նոր ենք դուրս բերում անցյալի քայլալված դրությունից:

Բացի այդ, վոր գլխավորն ե, խոշոր մեքենաներ և գյուղատնտեսական զործիքներ չափազանց սակավ են մեզ մոտ:

Եեվ վերջապես դժվարություններից վերջինն այն ե, վոր մեր գյուղը և գյուղացիությունը կուլտու-

բառես շատ ավելի քիչ և զարգացած, քան թե Ռուսաստանի դյուղացիությունը:

Այս պարմաններն ավելի դժվարացնում են կոլտնտեսությունների կազմակերպումը Հայաստանում: Բայց չպետք է մոռանալ նաև այն, վոր հենց այսպիսի դրությունն ել ավելի անհրաժեշտ և դարձնում կոլտնտեսությունների կազմակերպումը մեզանում. Զե՞ վոր այդ չքավոր դրությունից կարելի լի դուրս դաւ միայն կոլլեկտիվ ուժերով, կազմակերպելով կոլլեկտիվ տնտեսություններ:

Կասկածից դուրս ե, վորանհատ չքավոր գյուղացին վոչ կարող ե արակտոր ձեռք բերել և վոչ ել գյուղատնտեսական այլ մեքենաներ: Բայց յեթե չքավորները միանան, և նրանց հետ միանան նաև միջակները, և պետությունն ել ոգնի նրանց, այն ժամանակ թե տրակտոր կարող են ձեռք բերել և թե գյուղատընտեսական այլ մեքենաներ: «Դեղ կանգնի—զերան կլոտրի», ասում ե առածը: Այն, ինչ չի կարելի անհատական միջոցներով ձեռք բերել, դա հնարավոր և ձեռք բերել միացյալ ուժերով և կոլլեկտիվ աշխատանքով: Հենց կոմկուսակցության և խորհրդային իշխանության նպատակն ել ե, վոր պեսզի վողջ բանվոր դասակարգը և նրա հետ մեկտեղ չքավոր ու միջակ գյուղացիությունը միացյալ ուժերով կառուցի սոցիալիզմը մեր յերկրում:

Այդ եր պատճառը, վոր ընդամենը մեկ տարվա ընթացքում Հայաստանում կազմակերպվեցին 150-ից ավելի կոլտնտեսություններ:

Չքավոր և միջակ գյուղացիությունը ճիշտ կերպով հասկանալով կոլտնտեսությունների նշանակու-

թլունը և նրանց անհամեմատ մեծ առավելությունը անհատական տնտեսությունից ու նրա զարգացման հեռանկարները՝ այժմ մասսայական կերպով դիմում և կոլտնտեսությունների կազմակերպման:

Ներքոհիշյալ թվերը ցույց են տալիս Հայաստանի կոլտնտեսությունների տվյալները:

1926-27 թ. Հայաստանում մենք ունեցել ենք ընդամենը 8 կոլեկտիվ: Առ 1-ն ապրիլի 1929 թ. նրանց թիվը հասնում է 175-ի, վորոնց մեջ ընդ գրկած են 4264 տնտեսություն 19,109 անձերով: Այժմ արդին կոլտնտեսությունների թիվը հասնում է 274-ի, իսկ 29-30 թվին 400-ի ի հասնելու:

Կոլխոզներում ընդդրկված տնտեսություններն ամրող Հայաստանի գյուղական տնտեսությունների 2 տոկոսից ավելի յեն:

Հստ սոցիալական գրության հետեւյալ պատկերն են ներկայացնում: Հրավորներ՝ 2985 տնտեսություն կամ  $70\%$ , միջակներ՝ 960 տնտեսություն կամ  $22,5\%$ , բատրակներ՝ 311 տնտ. կամ  $7,3\%$  և ունեորներ՝ 8 տնտեսություն կամ  $0,2\%$ ,

Հստ կուսակցության (տվյալները առ 1-ն մարտի 29 թ. և 157 կոլեկտիվի մասին):

Կուս.	անդամ-թեկնածուներ	958	հոգի,	կամ	$27,5\%$
ԼԿՑԻՄ	»	646	»	»	$18,6\%$
Անկուսակցական		1876		»	$53,9\%$

Կոլեկտիվ տնտեսությունների ցանքսերի տարածությունը 170 կոլեկտիվների տվյալների համաձայն կազմում է 9,725 հեկտար, իսկ 29-30 թ. լինելու յի 29,000 հեկտար:

Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս, վոր միջակ գյուղացիների տոկոսը կոլեկտիվ անտեսություննե-

րում ավելի քիչ եւ Սա, անկասկած, խոշոր թերություն  
է, և մենք հետագարում պետք եւ միջոցներ ձեռք առ-  
նենք վերացնելու ալդ թերությունները:

Ամենքիս հայտնի լին, վոր գլուղի ռկենտրոնական  
դեմքը հանդիսանում եւ միջակ գյուղացիությունը:  
Ամենքիս հայտնի յեւ միաժամանակ և այն, վոր մենք  
ամուր դաշինք ենք կապել միջակ գյուղացիության  
հետ և գլուղում նրանց հետ ձեռք ձեռքի տված առաջ  
ինք տանում մեր տնտեսությունը: Ամենքիս հայտնի  
լին, վերջապես, և այն, վոր մենք սոցիալիզմը կառուցում  
ենք գյուղացիության, հետեապես և գյուղացիության  
հիմնական մաս կազմող միջակ գյուղացիության հետ:  
Ուրեմն ալֆմ, յերբ մենք գլուղում սկսել ենք սոցիա-  
լիստական բջիջների հիմք դնել, այդ գործում ևս մի-  
ջակ գյուղացիությունը պետք եւ մասնակցի և կազմի  
նրա կենտրոնական դեմքը: Այս ուղղությամբ պետք  
եւ գնա մեր քաղաքականությունը:

Սակայն ինչով բացարել այն փաստը, վոր մի-  
ջակ գյուղացիությունը քիչ տոկոսով եւ ընդգրկված  
կոլտնտեսություններում: Պատճառը՝ պարզ եւ. միջակ  
գյուղացին տատանվում եւ դեռևս, նա հավատացած  
չի, վոր կոլլեկտիվ տնտեսությունները հաջողություն  
կունենան և կամրապնդվեն, նա դեռևս հավատացած  
չի, վոր կոլլեկտիվ տնտեսություններն ավելի շահա-  
վետ են, քան թե անհատական տնտեսությունները:

Այն ժամանակ, յերբ միջակ գյուղացիությունը  
յեղած կոլլեկտիվների փորձի հիման վրա կտեսնի և  
կհավատա, վոր կոլլեկտիվն ավելի շահավետ եւ, քան  
թե իր անհատական տնտեսությունը և կայուն հիմք եւ  
ծառայում գյուղատնտեսության հետագա զարգացմանը,

այդ գեղքում և միայն այդ ժամանակ նա կմտնի կոլանուսության մեջ:

Միջակների թույլ ընդգրկման պատճառներից մեկն ել կայանում են նրանում, վոր գեռես մեր կոլեկտիվները լիովին չեն ըմբռնել միջակների նկատմամբ վարած մեր քաղաքականությունը և շատ տեղերում խոչընդուներ են հանդիսացել միջակների ընդգրկմանը:

Հակամիջակալին տրամադրությունները հանդես են գալիս նաև կոմյերիտական կոլիսոզնիկների շրջանում։ Այսպես, որինակ՝ Լենինականի գտվառի Հաջինաղար գյուղի կոլեկտիվի կոմյերիտական անդամները պահանջել են բջիջից հեռացնել միությունից այն միջակ անտեսություն ունեցող կոմյերիտականներին, վորոնք կոլեկտիվ տնտեսության անդամ են, և սովորական պահանջել, վոր յեթե նրանք միությունից չհեռացվեն, իրենք խմբովին դուրս կգան կոլեկտիվ տնտեսությունից։

Մի շարք այլ տեղերում ել չքավոր կոլխոզնիկները հայտարարել են, վոր «կոլեկտիվները պետք են կազմակերպվեն բացառապես չքավորներից» և «կոլեկտիվները հատկապես չքավորների համար են»։ Այս տրամադրությունները և հայտարարությունները, վորոնք հանդես են գալիս մեր կոլեկտիվներում և կոմյերիտական շրջանում, ցույց են տալիս, վոր մեր չքավոր գյուղացիությունը և կոմյերիտմիության վորոշասը ղեռես չի հասկացել վոր առանց միջակ գյուղացիության, գյուղացիության այդ հիմնական մասի մենք չենք կարող վերակառուցել մեր գյուղը, վոր առանց միջակ գյուղացիների ունեցվածքը կոլեկտի-

վացման թենթարկելու զուտ չքավորական կոլլեկտիվ-ները չեն կարող անտեսապես ամրապնդվել վոր առանց միջակ գյուղացիության մասնակցությանը (վորը կազմում ե գյուղացիության 60-65% ) մենք չենք կարող գյուղում սոցիալիզմի բջիջների հիմքը դնել Յեկ վերջապես Բնշղես կարելի ե գյուղում նոր հեղափոխություն մտցնել առանց մեր գաղնակցի, առանց միջակ գյուղացիության 60-65%-ի մասնակցության:

Անհրաժեշտ ե ամենախիստ պալքարը մղել հակամիջակալին տրամադրությունների գեմ մեր բջիջներում և սրա հետ մեկտեղ լայն բացատրական աշխատանք դնել կոլլեկտիվ տնտեսությաններում և գյուղացիության շրջանում միջակ գյուղացիության նկատմամբ կուսակցության և իշխանության վարածքաղականության մասին և միջոցներ ձեռք առնել գրավելու միջակ գյուղացիությունը կոլլեկտիվ տնտեսությունների մեջ:

Այժմ միջակների ներգրավման գործն ավելի հեշտանում ե, քանի վոր մենք ունենք արդեն կազմակերպված կոլլեկտիվներ, վորոնց միջոցով և մեր բացատրական աշխատանքների ծավալման միջոցով հնարավոր ե միջակ գյուղացիների ավելի լայն մասսա ընդգրկել կոլտնտեսություններում: Ուրեմն հիմնական խնդիրներից մեկը միջակ գյուղացիության ընդգրկումն ե:

Ի՞նչ թափով ե զարգանալու կոլտնտեսությունների շինարարությունը Հայաստանում մոտակատարիներում: Ըստ մեր հնգամյա պլանի, մոտակահինգ տարվա ընթացքում Հայաստանի գյուղացիության

թիան 200/0-ը կոլեկտիվացման և յենթարկվելու։ Այդ չափազանց դժվար աշխատանք և և հնարավոր և իրագործել կլանքում այն ժամանակ, յերբ մեր դուղի բոլոր կազմակերպությունները կոֆնեն կուսակցությանը և պետությանը ալդ ծրագրի իրազործման մեջ։

Այստեղ անհրաժեշտ և կանգ առնել մի չափազանց կարևոր խնդրի վրա։

Ինչպես մեր հնգամյա ծրագիրն և ցույց տալիս, հինգ տարվա ընթացքում, այն ել բոլոր միջոցները գործ դնելուց հետո, հազիվ կարողանանք ընդգրկել գյուղացիության 200/0-ը կոլեկտիվներում։ Կնշանակի մեր յեղած միջոցներն ու հնարավորությունները մեզ թույլ են տալիս միայն գյուղացիության 200/0-ը կոլեկտիվացման յենթարկել։ Իսկ 800/0-ը մնալու յե կոլեկտիվ տնտեսություններից դուրս։

Ուրիշն կնշանակի՝ գյուղում տարվելիք մեր քաղաքականությունը դեռևս միայն կոլեկտիվ տնտեսություններով չի սահմանափակվում։ Դնելով կոլտնտեսությունների կազմակերպումը վորպես հասունացած և չափազանց կարևոր մի խնդրի, դրանով մենք մոռացության չենք տալիս և չպետք և տանք անհատական տնտեսությունները։

Շատերը կարծում են, վոր յերբ մենք ալժմ ամբողջ թափով գրել ենք գյուղի կոլտնտեսությունների կազմակերպման խնդիրը, հաղա անհատական տնտեսությունները մեզ այլևս չեն հետաքրքրելու, մեզ պետք չեն և վերջապես նրանք դառնում են կոլտնտեսությունների թշնամիները։ Այդպես կարծողները միանգամմայն սխալվում են. ալդ տրամադրությունների դեմ պետք և պայքարել, քանի վոր նրանք շղփում են մեր իսկական գծից։

Ալս յերեսուլթը նկատվել ե նաև մեր բջիջներում։  
Վերջին շրջանում միքանի գյուղերում, վորտեղ կոլ-  
տնտեսություններ կան, սրգում են կոլտնտեսություն-  
ներում ընդզրկված և կոլեկտիվներից դուրս գտնվող  
կոմյերիտականների փոխհարաբերությունները։ Նրանք  
սկսում են մի տեսակ խորթ աչքով նայել միմյանց։  
Սա չափազանց վտանգավոր յերեսուլթ ե. մեր բջիջ-  
ները պետք ե խիստ միջոցներ ձեռք առնեն և լայն  
բացատրական աշխատանք տանեն այդ վտանգավոր  
յերեսուլթը վերացնելու համար։

Բանը նրանում ե, վոր մենք մոռակա տարի-  
ներում հնարավորություն չունենք ամբողջ գյուղա-  
ցիությունը կոլեկտիվացման յենթարկել, և յեթե ու-  
նենայինք ել դա գեռես մեզ չի հաջողվի, քանի վոր  
մեկ կամ միքանի տարվա մեջ ամբողջ գյուղացիու-  
թյունը այն գիտակցության չի դալու, վորպեսզի բո-  
լորն ել միանգամից կոլեկտիվի անդամներ դառնան։

Մասնավոր սեփականատիրական և անհատական  
տնտեսություն վարելը հարյուրավոր և տասնյակ հա-  
րյուրավոր տարիներով իրենց արմատներն են գցել  
գյուղացիության մեջ և գեռես մեզ շատ յերկար  
և մեծ աշխատանք ե պետք, վորպեսզի կարողանանք  
վողջ գյուղացիությունը կոլեկտիվացման յենթարկել։

Քանի վոր հնարավոր չե այժմ բոլոր գյուղա-  
ցիներին կոլեկտիվացնել, հապա ուրեմն մենք պետք  
ե բոլոր միջոցներով ոժանդակենք անհատական և չքա-  
վոր-միջակ տնտեսություններին, բարձրացնենք նը-  
րանց տնտեսությունները, լրիվ չափով կոռպերացման  
յենթարկենք նրանց և լայն բացատրական աշխատանք  
տանենք նրանց մեջ և նախապատրաստենք նրանց

կոլլեկտիվ տնտեսություններն ընդգրկելու համար Առանձնապես այս ասպարհում խոշոր դեր ունեն կատարելու կոլխոզները և մեր կազմակերպությունը։

«Խոշոր հասարակական տնտեսության զարգացումը խորհրդային լերկրում տեղի լեռնենում վոչթե մանր ու մանրագույն տնտեսությունների կլանման և քայքայման միջոցով (ինչպես այդ տեղի լեռնենում բուրժուական լերկրներում—Ռ. Հ.), վոչթե նրանց դեմ պայքարելու միջոցով, այլ նրանց տնտեսական վերելքի, աճման, ուսխնիկայի, կուլտուրայի ու կազմակերպության բարձր մակարդակին հասցնելու միջոցով։ Խոշոր հասարակական տնտեսությունը չի հակադրվում անհատական, չքավորական և միջակային տնտեսություններին, վորպես նրանց թշնամի միուժ, այլ զողվում ե (միանում ե) նրանց հետ...»։ «Դրա համար ել կուսակցությունը պետք ե ավելի և ավելի մեծ չափով ոժանդակի չքավորական և միջակային անհատական տնտեսությանը...»։ Ահա թե ինչ ե ասում 16-րդ կուսակոնֆերանսն այդ մասին։

Այս հիմնական քաղաքականությունը կոլլեկտիվներում ընդգրկած կոմիերիտականները և առհասարակ կոլլեկտիվի բոլոր անդամները ովետք և լավ ըմբռնեն։ Նրանք վոչթե թշնամական վերաբերմունք պետք ե ցույց տան հանդեպ հարևան գյուղացիության, վոչթե աշխատեն քայքայել նրանց տնտեսությունը, այլ ոգնել նրանց այն ամենով, ինչ վոր հնարավոր ե և կազմակերպել նրանց կոլլեկտիվացման յենթարկելու համար։

Գ. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌԻԹՅԱՆ ՀԵՐԹԱՎԿԱՆ ԱՆԵԼԻՔ  
ՆԵՐԸ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԿՈՄՅԵՐԻՏՄԿԱՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՑԱՐՔԵՐՈՒՄ

Անցած յերկու գլուխներում մենք աշխատեցինք մեղ համար պարզել այն հարցը, թե ինչ ճանապարհներով և զարգանալու խորհրդավին գյուղը։ Մեզ համար պարզվեց, վոր խորհրդավին գյուղի զարգացման ճանապարհը դեպի սոցիալիզմ—դա կոռպերացումն և կոլլեկտիվացումն եւ։ Պարզեցինք նաև այն, վոր խորհրդային իշխանությունը կոմկուսի զեկավարությամբ այս ասպարիզում խոշոր տշխատանքներ են կատարել և հետագայումն ել ավելի լեռանդուն պետք ե շարունակին այդ աշխատանքը։

Միանդամայն պարզ ե, վոր վողջ կոմյերիտական կազմակերպությունների առաջ և հատկապես ներկա դեպքում գյուղական կոմյերիտականների առաջ դրված ե կուսակցությանը և իշխանությանն ոգնելու և ոժանդակելու խնդիրը։

Սակայն ոգնել և ոժանդակել կուսակցությանը կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպման և շինարարության ասպարիզում, վորպես կուսակցության առաջին ոգնական և փոխարինող—դեռևս չափազանց քիչ եւ։ Մեզ անհրաժեշտ ե, վորպեսզի գյուղական կոմյերիտականներ, վորպես գյուղի չքավոր ու միջակ

յերիտասարդության առաջապահներ՝ լինեն կոլտըն-  
տեսությունների առաջին շարքերում, վորպես ամե-  
նաառաջավոր սոցիալիզմ կառուցողներ: Մեզ անհրա-  
ժեշտ ե, վորպեսզի գյուղական կազմակերպություն-  
ների և ամեն մի բջիջի աշխատանքների առանցքը  
լինի կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն  
ու շինարարությունը:

Դեռ ավելին, «կոլտնտեսությունների շինարարու-  
թյանը մասնակցելու խնդիրը պետք է կազմի ամբողջ  
միության ուշադրության կենտրոնը: Նոր կոլլեկտիվ  
տնտեսությունների, արտադրական կոռպերացման  
պարզագույն ձևերի, այն ե՝ մեքենապատագործա-  
կան, մելիորատիվ ընկերությունների, հողի կոլլեկտիվ  
մշակությամբ զբաղվող ընկերությունների շինարա-  
րությունն ու կոլտնտեսության բարձր ձևերի վերա-  
ծելը պետք է լինի յուրաքանչյուր բջիջի ու կազմա-  
կերպության կարևորագույն գործը»: Ահա թե ինչ և  
ասում կոմիերիտմիության 8-րդ համագումարն իր  
«Աշխատանքը գյուղում» բանաձեռի մեջ:

Սա չափազանց բարդ և դժվար աշխատանք է,  
քանի վոր մենք գյուղում նոր հեղափոխություն ենք  
մտցնում, վոր մեղանից ավելի յերկար ժամանակ և  
ավելի վճռական անձնվիրություն և պահանջում: Յեզ  
միանգամայն պարզ ե, վոր բոլոր կոմյերիտականներն  
այնպես, ինչպես Հոկտեմբերյան հեղափոխության ժամա-  
նակ քաղաքացիական կոխմերի առաջին շարքերումն  
եյին գտնվում, այնպես ել այժմ, գյուղում տեղի ու-  
նեցող նոր հեղափոխության մեջ առաջին շարքերում  
պետք է գտնվեն: Այս պետք է հասկանա յուրաքան-  
չյուր կոմիերիտական:

Այն կոմիերիտականը, վոր այս հիմնական հարցը չի հասկանում, կնշանակի նա շատ քիչ բան ե հասկանում մեր գլուղում տարվելիք ներկա քաղաքականությունից:

Բայց հասկանալ դեռևս քիչ ե: Հասկանալ, վոր պլուղում տարվելիք մեր հիմնական աշխատանքը գյուղի կոռպերացումն ու կոլեկտիվացումն ե, այդ մասին ճառել գյուղացիությանը և հեռու մնալ կոլտնտեսություններից կամ չմտնել կոլտնտեսությունների մեջ (այնպես, ինչպես այդ անում են մի շարք կոմիերիտականներ), դա վոչ մի արժեք չունի, դա կոմյերիտմիության պարտականություն չե: Այժմ վոչ միայն ճառասելու ժամանակն ե, այլ նաև զանդ կախելու ժամանակը, իսկ այդ զանդ կախողն առաջին հերթին պետք է լինի գյուղի կոմիերիտականը:

«Համագումարը պարտավորեցնում ե լուրտքանչուր ինքնուրույն տնտեսատեր կոմյերիտականի լինել կոլեկտիվ տնտեսության մեջ: Գյուղում կոլտնտեսություններ կազմակերպելիս կոմիերիտական տնտերերը պետք ե առաջինը մտնեն նրանց մեջ» (8-րդ համագումարի վորոշումներից):

Ինչպես տեսնում ե ընթերցողը, համագումարը պարտավորեցնում ե ինքնուրույն տնտեսատերերին առաջին հերթին կոլտնտեսության մեջ մտնել: Այս վորոշումը պետք ե անպայման կիրառել:

Բայց չպետք ե մոռանալ մի բան. վոր յեթե համագումարը միայն ինքնուրույն տնտեսատերերին ե պարտավորեցնում կոլեկտիվի անդամ դառնալ, դա դեռևս չի նշանակում, վոր մըուս կոմիերիտականները չպետք ե մտնեն կոլտնտեսությունների մեջ կամ այդ

ուղղությամբ վոչինչ չունեն անելու: Ընդհակառակը, նրանց գործն ավելի դժվար ե: Նրանք բոլոր միջոցները պետք ե ձեռք առնեն՝ համոզելու իրենց ծնողներին կոլեկտիվի անդամ դառնալու համար: Սա ծնողատեր կոմիտեի համար կարևոր աշխատանքն ե:

Հետագայում մենք պետք ե ընդունենք «վոչ մի կոմիտեի տական կոլտնտեսությունից դուրս չպետք ե մնա» մարտական լոգունգը:

Սակայն չպետք ե թագցնել, վոր այժմ արդեն կան կոմիտեի տականներ, վորոնք խուսափում են կոլեկտիվներից: Կան այնպիսի կոմիտեի տականներ, վորոնք փախչում և դուրս են գտնիս կոլեկտիվներից: Այդպիսի կոմիտեի տականներին Վաղարշապատի կոմիտեի տականները «սոցիալիզմի դեղներտիր» են անվանում: Այս միտքը չափազանց ճիշտ և տեղին են դորձածում Վաղարշապատի կոմիտեի տականները: Այդ արտահայտությունը կոմիտեի տական մասսաներից դուրս յեկած ամենավճռական և ազդու պատասխանն ե կոլեկտիվից փախչող կոմիտեի տականի համար: Յեվ իրոք, այն կոմիտեի տականը, վոր սոցիալիզմի կառուցման դործից փախչում ե, նա իսկապես սոցիալիզմի դեղներտիր ե դառնում:

Սակայն դժբախտությունը կայանում ե նրանում, վոր վոչ միայն գեղերտիրներ կան մեր շարքերում, այլև գեղերտիրներ լինելով հանդերձ՝ նրանք գլուղի կուլակների: Ինտ միացած աշխատում են քայլայել կոլտնտեսությունները:

Այսպես վարվեցին Ղուրդուղուլիի շրջանի Ղուղուդիդան գլուղի միքանի կոմիտեի տականներ անցյալ տարի: Նրանք միանալով իրենց գյուղի միքանի կու-

սակցական արոցկիստներին և միաժամանակ դաշն կապելով կուլտիների հետ՝ աշխատում եյին քայքայել գյուղի կոլեկտիվը։ Սակայն մեր Դուրդուղութիւնի շրջանի կուսակցական և կոմիտերիտական կազմակերպությունները և նրանց հետ մեկտեղ՝ գյուղի չքավորներն ու միջակները կարողացան արժանի պատասխան տալ նրանց, գուրս վտարելով վերջիններիս կուսակցությունից, կոմիտերիտությունից և կոլեկտիվ տնտեսությունից։

Պարզ է, վոր նրանք կատարում ելին այն, ինչ վոր կուլտիներն եյին ցանկանում։ Նրա համար ել անհրաժեշտ է, վորպեսզի մեր բոլոր ըջիջներն ամենավճռական պայքար մղեն ինչպես կուլակների, նույնպես յեվ դեպի կուլակները գնացող կոմյերիտականների դեմ։

Դեռ ավելին, կուլակներն աղջում են նաև վորոշ կոմիտերիտականների վրա։ Նրանք կարող են դեռ դասակարգացնորեն չկոփիված կոմյերիտականներին իրենց աղջեցության տակ դցել և դուրս բերել նրանց ընդդեմ կոլեկտիվ տնտեսությունների։ Այդպիսի կոմյերիտականներից մեկն և Սարդարաբադի ԼիթեՄ ըջիջի անդամ Աբրահամ Միջիկանը։ Նա վոչ միայն կոլեկտիվ տնտեսության կազմակերպման դեմ և դուրս դալիս, այլ և հանդիսանում է կուլակների «իդեոլոգը»։ Նա մինչև իսկ զրի յե առել իր կարծիքները կոլտնտեսությունների վերաբերաւ իր հայտնի՝ «Սոցիալիզմի քննադատություն» վերնագիրը կրող տետրակում։ Այժմ տեսնենք, թե ինչ է ասում մեր նորահայտ «սոցիալիզմի քննադատը»։ «Յերբ յես լսեցի, վոր մեր գյուղում կազմա-

կերպվում ե կոլլեկտիվ տնտեսություն, տխրությունը պատեց ինձ (կոմիերիտականները շատ լավ գիտեն, թե գլուղում ունն ե տխրություն պատճառում կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը): Յես ինձ բանտումն եյի զգում և այդ որը և ամբողջ գիշերը չքննցիս: Այն ժամանակ, յերբ կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն ուրախություն ե պատճառում չքավոր և միջակ գլուղացիությանը, յերբ մեր կոմյերիտական բջիջները յեռանդուն և ջանասեր աշխատանք են տանում գլուղացիության մեջ կոլլեկտիվ տնտեսություն կազմակերպելու համար, ճիշտ այդ ժամանակ մեր հայտնի «կոմիերիտական քննադատը» կոլլեկտիվ տնտեսության «սարսափից» գիվահար յեղած՝ որ ու գիշեր չի կարողանում քննել:

«Կոլլեկտիվ կյանքը մեզ տանում ե դեպի անանական կյանքը»—այսպես ե ձևակերպում իր տետրակում «կոմյերիտական» Միջիյանը: Նա մուածում ե, վոր կոլլեկտիվ տնտեսություններում կանաչը ընդհանուրի սեփականություն են կազմելու, վոր այնուեղ ամեն վոք ում հետ վոր ցանկանա, կարող ե կենակցել և այլն և այլն: Միջիյանի տեսակետներն իսկ և իսկ կուլակալին տեսակետներ են. նա արտահայտում է կուլակների կարծիքը և նըանց բերանով և խոսում: Այդպես են պայքարում կոլտնտեսությունների դեմ բոլոր կուլակները:

Հենց այդ պրովոկացիալին զոհ դառնալու և կուլակների ազգեցության տակ ընկնելու հետևանքով ել մի ուրիշ կոմյերիտական, Փոքր Շահրիատ գլուղի Լկթեմ բջիջի անդամ՝ Վաղարշակը հայտարարում ե. «Ճղերք ջան. լավ յեղագ՝ կինս գեղ ե. կմտնեմ կոլլեկտիվ

տնտեսության մեջ և կոդտվեմ-լավ-լավ հարսներից», և կուլակների հետ ձեռք-ձեռքի տված՝ նա գյուղում տարածում և այն կարծիքը, վոր կոլեկտիվ տնտեսություններում կանաչը ընդհանուրի սեփականություն են կազմում: Առա թե ինչպիսի տեսակետներ են հայտնում կուլակների աղղեցության տակ ընկած կոմյերի-տականները կոլտնտեսությունների մասին: Թասակարգային թշնամին՝ զյուղի կուլակն ամենաստոր միջոցների լեզ դիմում կոլտնտեսությունների դեմ պայքարելու գործում: Անհրաժեշտ ե, վոր մեր բոլոր բջիջներն այդ բանը լավ հասկանան և արժանի հականարկած տան կուլակների վոտնագություններին:

Հայաստանի կոմյերի կազմակերպության վարչին սոց. կազմի ստուգումների ժամանակ մենք արդեն այդպիսի կոմյերի տականներից մաքրեցինք մեր շարքերը, բայց պետք է զգուշ լինեմ վոր նմանները կը ըկին անդամ չխցկվեն մեր շարքերը:

Սրա հետ մեկտեղ մենք պետք եմեր աշխատանքները տանենք այնպես, վոր բոլոր կոմյերի տականներն ել աստիճանաբար կոլեկտիվացման լենթարկեն իրենց տնտեսությունները և չլինեն այնպիսիներ, վորոնք փախչեն կոլտնտեսություններից: «Սոցիալիզմի կառուցման վոչ մի դեղերտիք մեր շարքերում»—ահա մեր նշանաբանը, և սա ամենաարժանի պատասխանը կլինի մեր բոլոր թշնամիներին:

## ԻՆՉԻՑ ՊԵՏՔ Ե ԱԿԱՆ

Այս հարցը չափազանց կարենոր ե: Մենք յերկրորդ գլխում ընդդեցինք, վոր մոտակա հինգ տարվա ընթացքում Հայաստանի գյուղացիության 20 տոկ.

կոլլեկտիվացման և յենթարկվելու: Կնշանակի գյուղի  
կոլլեկտիվացումը տարվում է անշեղ ճանապարհներով:  
Հարց և տռաջ գալիս՝ ի՞նչպիսի ձևերից պետք է սկսենք  
մեր աշխատանքները:

Միանգամայն հասկանալի լի, վոր պետք է սկսենք  
ամենապարզ ձեվերից և աստիճանաբար առաջ շարժ-  
վենք դեպի ավելի բարձր ձևերը, դեպի գյուղատնտե-  
սական կոմմունաները:

Զպետք և մոռանալ մի բան՝ վոր մենք ունենք  
այնպիսի կոմիերիտականներ և աշխատողներ, վորոնք  
գյուղում «միանգամից» սոցիալիզմ կառուցելու» բարի  
ցանկությամբ վոգեորվելով՝ դնում են անմիջապես  
գյուղատնտեսական կոմմունաներ կազմակերպելու  
խնդիրը:

Ինչ կասկած, վոր նման կոմիերիտականները  
տարվելով «Ճախ» ֆրազներով, միանգամայն սխալ-  
վում են: Մենք արդեն վերեռում ընդդեցինք, վոր մեր  
գյուղացիությունը դեռևս սովոր չե կոլլեկտիվ կյան-  
քին: Վոր տասնյակ և հարյուրավոր տարիներից իվեր  
նա վարում ե անհատական տնտեսություն, և նրա մեջ  
միս ու արյուն և գարձել անհատական տնտեսության  
գաղափարը: Այդ գրությունից գյուղացիությունը դուրս  
բերելու համար մենք համառ աշխատանք պետք և  
տանենք: Յեվ դրա համար ել յեթե մենք անմիջապես  
գյուղացիների առաջ դնենք կոմմունաներ կազմակեր-  
պելու խնդիրը, նրանք մեզանից կփախչեն, մեր յե-  
տերից չեն գա, և մենք վոչինչ չենք կարող անել գյու-  
ղի կոլլեկտիվացման ասպարիզում:

Ուրեմն անհրաժեշտ և սկսել ամենապարզ ձևե-  
րից: Սկզբում անհրաժեշտ և ընդգրկել բոլոր գյուղա-

ցիներին գլուղատնտեսական-վարկալին կոռպերացիա-  
լի մեջ Այնուհետև սկսել կոլեկտիվացման պարզ ձե-  
վերը, կազմակերպել մեքենապատագործական ընկերու-  
թյուններ, հողագործական ընկերություններ և ապա  
կոլտնտեսությունների և կօժմունաների կազմակերպ-  
ման հարց դնել Յեթե սկզբում մեղ հաջողվեց համոզել  
գլուղացիությունը, և գլուղացիությունն ինքն ել հա-  
մոզվեց, վոր միասին հող մշակելն ավելի ձեռնտու յե և  
այնուհետև կամաց-կամաց ընտելացավ կոլեկտիվ աշ-  
խատանքին և կոլեկտիվ կանքին, հենց ինքը չքա-  
վոր ու միջակ գյուղացիությունը կոլեկտիվ տնտե-  
սության ավելի բարդ ձեռքին անցնելու հարց կառա-  
ջադրի: Անա այսպես պետք և սկսել գյուղատնտեսու-  
թյան կոլեկտիվացումը:

Այստեղից բղիում են կոմյերիտմիության աշխա-  
տանքները:

Տանել լայն և բացառական աշխատանք չքա-  
վոր և միջակ գյուղացիության շրջանում, անհատա-  
կան տնտեսություններից կոլեկտիվ տնտեսության  
անցնելու անհրաժեշտության մասին, կոմյերիտական-  
ների նախաձեռնությամբ կազմակերպել նոր մեքենա-  
պատագործական և հողագործական ընկերություններ  
գլուղում, ձգտել այն բանին, վոր այդ ընկերություններն  
աստիճանաբար վերածվեն կոլտնտեսություննե-  
րի, կազմակերպել եքսկուրսիաներ դեպի խորհրդակին  
և կոլեկտիվ տնտեսությունները՝ նրանց աշխատանք-  
ներին ծանոթանալու համար—կոմյերիտական աշխա-  
տանքների հիմնական խնդիրը պետք և լինի:

Ակներեւ ե այն փաստը, վոր գյուղական բջիջնե-  
րի մեծ մասը նման խնդիրներում հանդես չեն բերում

անհրաժեշտ ինքնագործունեյություն։ Նրանք սպասում են այնքան, վոր գավկոմից և շրջկոմից համապատասխան հրահանդ ստանան և աղա անցնեն այս կամ այն աշխատանքի։ Այդ ձևին պետք ե վերջ տալ, կոմիերիտական բջիջներն ըմբռնելով կուսակցության՝ գյուղում տարվելիք ներկա բաղաքականությունը— իրենց ինքնագործունեյությամբ և նախաձեռնությամբ պետք ե սկսեն այս կամ այն աշխատանքը։ Մեր բջիջները պետք ե հիմք դնեն զյուղում մելիորատիվ մեքենապտագործական և այլ ընկերությունների կազմակերպմանը։ Նրանք պետք ե հաշվի առնեն գյուղացիությունը կողանտեսությունների կազմակերպման համար։

Մեր բջիջները չպետք ե զյուղացիության պոչից գնան, չպետք ե այնքան սպասեն, վոր զյուղացիությունն ինքը կոլլեկտիվ անտեսություն կաղմակերպի, և կոմյերիտականներ մտնեն այդ կոլլեկտիվում։ Կոմիերիտականները կուսակցության հետ միասին առաջինը պետք ե լինեն ամեն մի աշխատանքի ընթացքում և զեկավարեն ու տոն տան զյուղացիության պահանջներին։ Այլ ձևով կոմյերիտմիությունը չի կարող իր լեռներ տանել բանվորապյուղացիական յերիտասարդությունը։

Հատկապես այս ասպարիզում խոշոր դեր ունեն կատարելու կոլլեկտիվներում ընդդրկված կոմյերիտականները։ Մրանք չպետք ե սահմանափակվեն նրանով, վոր իրենք կոլլեկտիվի անդամ են և պետք ե աշխատեն միայն կոլլեկտիվում։ Ընդհակառակը նրանց պարտականությունն ե՝ ամբողջ գյուղը կոլլեկտիվացման յենթարկել։

Կոլխոզնիկ կոմյերիտականները մեծ աշխատանք պետք ե տանեն շրջապատի գյուղացիության մեջ: Կոլեկտիվները տրակտորով, լավ տեսակի սերմերով և բուժիչ նյութերով պետք ե ողնեն կոլեկտիվից գուրս զանվոր չքավոր և միջակ տնտեսություններին: Սա առաջին հերթին կոլխոզնիկ կոմյերիտականի պարտականությունն եւ Բարձրացնել շրջապատի գյուղացիության գյուղատնտեսության բերելու չքավոր գյուղացիությունը կուլակների ազգեցությունից, դուրս բերելով միաժամանակ նրանց չքավոր գրությունից—սեր կազմակերպած կոլեկտիվների պարտականությունն եւ:

Դեռ ավելին: Կոլտնտեսությունները հաճախ պետք ե զեկուցումներով հանդես գան իրենց և հարևան գյուղացիության ժողովներում, թե ինչ են արել և ինչ ե տվել իրենց կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը: Կոլեկտիվներում ընդգրկված կոմյերիտականները, ինչպես և մյուս կոմյերիտականները, պետք ե կազմակերպեն գյուղի չքավոր տնտեսություններին ոժանդակելու աշխատանքը, ինչով վոր հնարավոր ե դա:

Միայն այս ձեռվ մենք կարող ենք լայնացնել կոլեկտիվների կազմը: Միայն այս ձեռվ մենք կարող ենք չքավոր և միջակ գյուղացիներին ընդգրկել կոլեկտիվ տնտեսություններում: Իսկ ինչքան շատ գյուղացիներ կոլեկտիվացման յենթարկվեն, և ինչքան մեծ լինեն կոլտնտեսությունները, այնքան շուտ մենք վերակառուցման կենթարկենք մեր գյուղը:

Նպատակ ունենալով լայնացնել կոլտնտեսությունները և նոր կոլտնտեսություններ կազմակերպել՝ մենք չպետք ե աչքաթող անհնք ամրապնդելու յեղած կոլտնտեսությունները, վորակապես բարձրացնելու և ուժեղ տնտեսություն դարձնելու խնդիրը։ Չե՞ վոր հենց նոր կոլլեկտիվների կազմակերպումը կախված ե նրանից, թե ինչ հիմքերի վրա յեն դրված յեղած կոլլեկտիվները։ Պարզ ե, յեթե չքավոր և միջակ գյուղացին չտեսնի, վոր մեր կոլլեկտիվներն աստիճանաբար առաջ են գնում և ամրապնդվում, նույն կոլլեկտիվի մեջ չի մարնի, և, բացի այդ, յեղած կոլլեկտիվներն ել կքալքարգեն։ Ուստի և պետք ե բոլոր միջոցները ձեռք առնել ամրապնդելու յեղած կոլլեկտիվները։

Վորմնք են կոմյերիտականների անելիքներն այս տսպարիզում։

**Առաջին խնդիրը** — դա կոլտնտեսությունների տպրանքային մասի (շուկա արտադրվելիք ապրանքի) առման խնդիրն եւ կարողանալ քիչ միջոցներ գործադրելով ավելի շատ բներք ստանալ — սա յուրաքանչյաւը կոլլեկտիվի առաջին պարտականությունն եւ Սակայն հարց ե առաջ գալիս՝ ի՞նչպես քիչ ուժերի և միջոցների գործադրմամբ ավելի շատ բներք ստանալ։ Այս հարցի պատասխանը կախված ե նրանից, թե մենք ինչպիսի ձևերով կմշակենք մեր կոլտնտեսությունները։

Մի շարք տեղերում կատարված փորձը ցույց է տվել, վոր յերբ հողն աղբով պարարտացնում են և ֆամանակին վարում, այնուհետև սերմացուն մաք-

բում, շարքացանով ցանում և ժամանակին ել պայքարում մասատուների դեմ, հողն անհամեմատ ովելի շատ բերք ե տոլիս, քան թե առաջ, ի՞րք այդ տարրական և հասարակ միջոցները չելին գործադրում։

Այսպես, որինակ, Աշտարակի շրջանի Ռշական գյուղի բատրակ կոմյերիտականներից մեկը ալգեգործ կոմյերիտականների կոնֆերանսում հետեւալ փաստերըն և բերում իր տնտեսությունից, «Հիմա միշտ այդին գարնանը փորելուց առաջ մոխրով պարարտացնում եմ և, բացի այդ, յերեք անգամ ել բորդուան հեղուկով և մեկ անգամ ել ծծմբով սրսկում եմ։ Նախանցյալ տարի մեր այգին տվեց 90 փ. խաղող, իսկ անցյալ տարի՝ 150 փ., վորը ինձ հաջողվեց ստանալ ընդամենը 15 ռ. բուժիչ նյութեր գործադրելու ։»

Մի ուրիշ կոմյերիտական ասում ե. «27 թ. մեր ալգին միայն յերկու անգամ սրսկեցի առաջա 15 խալվար խաղող, իսկ 28 թ. յերեք անգամ բորդոյան հեղուկով սրսկեցի և մեկ անգամ ծծումբ փչեցի ու ստացա 18 խալվար խաղող։ (Խալվարը 30 փութ ե)։

Այսպես, ուրեմն, 15 ռ. ծախսելով՝ տնտեսությունը տվել ե յերկու-յերեք խալվար ավելի բերք։ Այսպիսով մենք տեսնում ենք, վոր շատ տարրական միջոցներ գործադրելով՝ մենք կարող ենք բերքատվությունը բարձրացնել։ Յեթե անհատական տնտեսությունը կարող է այդ անել, ապա կոլտնտեսությունը, կոլլեկտիվ ուժերով և գիտական միջոցներով ավելի շատ կբարձրացնի հողի բերքատվությունը։

Կոմյերիտականների անելիքն ե յեղած բոլոր հընարավոր միջոցներն ոգտագործել հողի բերքատվությունը բարձրացնելու համար։

Վոչ մի հատիկ սերմ առանց մաքրելու գետինը  
չպետք ե գցել, վոչ մի ֆունտ աղբ չպետք ե մնա բա-  
կերում, փողոցներում յեվ գյուղում, վոչ մի աշխա-  
տանք առանց գյուղատնտեսի կամ առաջավոր փոր-  
ծառու կոլխոզնիկի չպետք ե կատարել, ըստ հնարա-  
վորության պետք ե կիրառել գյուղատնտեսական գի-  
տելիքների վերջին խոսքը։ Յեթե ժամանակին սեր-  
մազտիչ մեքենան չի հասցնելու ցանվելիք ամբողջ  
սերմի մաքրումը, կոմիերիտականները պետք ե կազ-  
մակերպեն սերմացուն ձեռքով մաքրելու աշխատան-  
քը ձմեռվա ամիսներին։

Իմանի դեռ մենք չունենք հողը պարարտացնելու  
գիտական քիմիական պարարտանյութեր, քանի դեռ  
մենք լրիվ չափով մեքենայացման չհնք լենթարկել  
մեր կոլլեկտիվ տնտեսությունները, նպատակահար-  
մար կերպով պետք ե ոգտագործենք յեղած բոլոր մի-  
ջցները։

Կոմիերիտական կոլխոզնիկներին առաջադրվում և  
ինքնագործոն խմբակներ կազմակերպել աղբի հավաք-  
ման, սերմի մաքրման և վարելահողն անպետք խո-  
զաններից, խոտերից և քարերից մաքրելու համար։

Յերկրորդ խճղիրը աշխատանքի արտադրու-  
ղականության բարձրացումն և մեր կոլլեկտիվներում։  
Զպետք ե մոռանալ, վոր բերքի բարձրացումը կախված  
ե նաև կոլտնտեսության բոլոր անդամների ժրա-  
ջան աշխատանքներից։ Աշխատել ավելի յեռանդուն և  
դրա հետ մեկտեղ պայքարել թամբալության, գլուխ  
պահելու, սիմուլյանտության (զալբության) և ծուլու-  
թյան դեմ, —սա նույնպիս ամեն մի կոմիերիտականի  
պարտականությունն եւ։

ինչու պետք ե թագցնենք, կոլեկտիվ աշխատանքի ժամանակ կլինիկ կոմիտատականներ, ինչպես և կոլխոզի անդամներ, վորոնք կաշխատեն գլուխ պահել, կիրածարվեն դժվար աշխատանքներ վերցնել, և այս բոլորը կնվազեցնի աշխատանքի արտադրողականությունը:

Կոմիտատական բջիջները նմանների դեմ՝ պետք ե պայքար մզեն Յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք ե իմանա, վոր ամենաժամանակաշահ աշխատանքի միջոցով ե, վոր պիտի կարողանանք ամրապնդել մեր կոլեկտիվները: Ավելին, կոմիտատականներն ամենազժվար աշխատանքներն իրենց վրա պետք ե վերցնեն, վորպես առաջավոր կոլխոզնիկներ:

Այստեղ վատ չեր լինի, յեթե կոլխոզներին կից բջիջները կազմակերպեցին աշխատանքի արտադրողականության բարձրացման մրցում, վորոշ որ և ժամանակ սահմանելին այս կամ այն աշխատանքի համար և մրցման սիջոցով այդ աշխատանքը ժամանակին վերջացնելու:

Մեր կարծիքով՝ վատ չեր լինի, յեթե կոլեկտիվները հաճախ հրավիրեցին արտադրական խորհրդակցություններ, վորտեղ քննելին կոլեկտիվին վերաբերող այս կամ այն հարցը: Այս ձեփի կիրառումը շատ խոշոր չափով կրաքացներ աշխատանքի արտադրողականությունը կոլխոզներում, այնպես, ինչպես զատեղի յեւնենում արտադրության մեջ:

Թերեւոք խնայողական ռեժիմի ամենախիստ կիրառումն ե կոլեկտիվում: Չպետք ե մոռանալ մի բան, վոր կոլեկտիվներում ընդգրկված գլուղացիների մեջ անհատական սեփականատիրական

ձդուռամներ դեռևս շատ յերկար ժամանակ կպահպանվեն: Կոլլեկտիվսերի մեջ կան և կլինեն այնպիսի մարդիկ, վորոնք կոլխոզին նայելով վորպես ռկաղըոննի տնտեսության՝ կաշխատեն ամեն կերպ մի բան՝ ավել պոկել, չնթել տունտանելու համար: Նմանների դեմ բջիջները պետք ե պայքարեն: Պետք ե իմանալ, վոր յուրաքանչյուր մի «չոփն անգամ» պետք ե կոլլեկտիվին: Անհրաժեշտ ե ամուր պահպանել ամեն սի կոպեկը, պետք ե ոյդ «չոփերը» հավաքել, այդ կոպեկները մանեթ դարձնել այդ սանեթները տասնյակ և հարյուրավոր մանեթներ՝ կոլտնտեսությունն ամրացնելու համար:

Լավ կլիներ, վոր կոմիերիտուկան կոլխոզնիկները կազմակերպելին այստեղ և այնտեղ ընկած «մանրմունը» մնացորդները, այս կամ այն անկյունում «մոռացված» իրերը հավաքելու գործը:

Վերոհիշյալի հետ մեկտեղ մեր բջիջներն ամենախիստ պայքարը պետք ե մղեն անտնտեսավարության, անտեղի ծախսութմների և անծրագիր աշխատանքի դեմ: Պետք ե պետությունից ստացած վարկերը միանգամայն տեղին, նպատակին յեվ ժամանակին գործադրվեն: Իսկ չե՞ վոր անտեղի և անծրագրված ծախսեր դեռևս շատ են կատարվում վոչ միայն կոլխոզներում, այլև մեր արդյունաբերության մեջ և մեր անտեսական շինարարության այս կամ այն ընադավառում:

Որինակ՝ Վերին Խաթունարխի կոլլեկտիվի հոգն անցյալ տարի այնքան անպետք ելին վարել, վոր կոլլեկտիվը ստիպված յեղավ կրկին անգամ փող ծախսել և հողը նորից վարել: Ցավալին այն ե, վոր նման դեպքեր շատ են պատահում կոլլեկտիվներում, վորոնք

մասամբ նաև մեր կոլեկտիվների անփորձության հետևանք են: Այդ թերությունները պետք եւ վերացնել անհրաժեշտ եւ խնայողական ռեժիմը խիստ կերպով կիրառել կյանքում յեվ խնայել այն ամենը, ինչ վոր հնարավոր ե:

Կոլլեկտիվի լուրաքանչյուր անդամ բարեխիղճ կերպով պետք եւ կատարի իրեն հանձնարարած աշխատանքները: Լավ կլիներ, վոր կոլլսողներին կից կոմիտական բջիջներ կաղմակերպեցին «Աշխատանքի ստուգող զոկեր», վորոնք ամեն որ չերեկուան աշխատանքներից հետո շրջելին տնտեսության այս կամ այն մասը—ստուգելու համար, թե ինչպես են կատարվել այդ որվա աշխատանքները: արդյոք պակասություններ չկան, թերի չի թողնված գործը, և միջոցներ առաջադրեցին այդ պակասությունները վերացնելու համար:

Խնայողության կիրառման այս ձեր, աշխատանքների ստուգման այս սիստեմը մեղ անհրաժեշտ ե, վորպեսզի մեր կոլլեկտիվներն ամբապնդվեն և կարողանան աստիճանաբար իրենք իրենց ղեկավարել առանց պետության ոժանդակության:

Զպետք եւ առհասարակ այնպես մտածեն կոմյերիտականները, թե միշտ կարելի յե պետությունից փող ստանալ: Այս սորեսային և վորբանոցային տըրամադրություններին պետք եւ վերջ տալ: Միքանի տարրուց հետո կոլլեկտիվները պետք եւ աշխատեն առանց պետության ոժանդակության:

Զորուգ խնդիրը կոլլեկտիվի անդամների ընքնազործունելության խնդիրն եւ Մեր ֆարբիկաներում և զավողներում մասնավորապես վերջին աարի-

ներս լայն լավով տարածված և բանվորների ինքնագործունեյությունը, գյուտարարությունը և ազնա՛նորհիվ նրան, վոր արդյունաբերության տերն ու տնորենը բանվոր դասակարգն և, բացի այդ, վոր նրան տրված են կուլտուրապես առաջադիմելու, զարգանալու լայն հնարավորություններ, նա այժմս հանդիս է զալիս նորանոր գործնական առաջարկներով մեր արդյունաբերությունը ել ավելի զարգացնելու և ամրապնդելու գործում:

Շատ հավանական է, վոր մեր կոլլեկտիվներում մենք ունենանք այնպիսի գյուղացիներ, վորոնք աշխատանքի ընթացքում կտամ անցրալի փորձից յելնելով՝ մի չարք գործնական առաջարկներ կանեն՝ կոլլեկտիվ աշխատանքների այս կամ այն մասին վերաբերող, վոր գործն ավելի հեշտացնում է, և վորի գործադրումն ավելի շատ արդյունք կտա:

Նման կոլխոզնիկների վրա պետք և հատուկ ուշադրություն դարձնեն մեր կոլլեկտիվները, կոլլեկտիվները և նրանց վարչություններն ուշադրությամբ պիտի քննեն կոլլեկտիվի այս կամ այն անդամի կողմից յեղած խելոք առաջադրությունները և նրանց նպատակահարմարության դեպքում կիրառել կյանքում: Մեր բջիջների պարտականությունն ե խրախուսել և քաջալերել այն բոլոր թեկուղ ամենափոքրիկ առաջարկները, վորոնք դալիս են բարձրացնելու կոլլեկտիվ տնտեսությունները:

Կոլլեկտիվի լուրաքանչյուր անդամ—առավել ևս կոմիերիտականը միանգամայն գիտակցաբար պետք ե մոտենա իրեն հանձնարարված աշխատանքին: Նո պետք ե փնտոի և գտնի այն միջոցներն ու յեղանակ-

ները, վորոնց կիրառումով գործն ավելի հեշտ և շուտ կկտտարվի և ավելի շատ արդյունք կտա:

Այսպիսով մեր առաջ գրվում ե կոլլեկտիվի անդամների խնդնագործունելության և ընդունակությունների ոգտագործման և զարգացման խնդիրը:

Հինգերորդ խնդիրը կոլտնտեսությունների միջև սոցիալիստական մրցության կազմակերպման խնդիրն եւ Ասացինք, վոր կոլլեկտիվի անդամները մրցման կարգով պետք եւ բարձրացնեն կոլտնտեսությունների արտադրողականությունը: Այդպիսի մըրցում պետք ե կազմակերպել նաև տարբեր կոլլեկտիվների մեջ: Մեր արդյունաբերության մեջ հատկապես վերջերս շատ ուժեղ թափով ծավալվեց սոցիալիստական մրցումը: Այդ մրցման հետևանքով արդյունարերության մի շարք ճյուղերում արտադրողականությունը զգալի չափով բարձրացավ, ինքնարժեքն իջավ, կրծատվեցին գործից ուշանալու և գործի չգալու յերեվույթները և ալլն: Սոցիալիստական մրցումը մեծ վոգենրություն առաջ բերեց ամրող բանվոր դասակարգի մեջ և միլիոնավոր բանվորներ ընդգրկվեցին նրանում: Նման մրցում պետք ե կազմակերպել նաև գյուղում և հատկապես կոլլեկտիվ տնտեսություններում: Կոլլեկտիվ տնտեսությունների սոցիալիստական մըրցման նպատակը պետք ե լինի՝ բարձրացնել կոլլեկտիվի բերքատվությունը և արտադրողականությունը, նորանոր չքավոր և միջակ գյուղացիներ ներգրավել կոլլեկտիվներում, լայնացնել կոլլեկտիվի ցանքսաղացները և ավելի մեծ ոժանդակություն ցուց տալ շրջապատի գյուղացիներին ու ավելի լայն չքավոր և միջակ գյուղացիներին յերթարկել կոլլեկտիվի ազ-

դեցութիանը։ Այս աշխատանքները նախաձեռնողները  
պետք են լինեն մեր կոմիերիտականները։

Ցեվ, վերջապես, վերջին խնդիրը ինքնաքննա-  
դատության լոգունդի լայն կիրառումն են կոլոնա-  
սություններում։ Մենք ասացինք, վոր կոլեկտիվ  
տնտեսությունները դեռևս նոր են կազմակերպվում  
մեզանում և չունեն աշխատանքի փորձ։ Աշխատանքի  
փորձ չունենալու դեպքում թերությունների և պակա-  
սությունների ավելի շատ դիպքեր կարող են տեղի ու-  
նենալ, վորոնց շտապ վերացումը կախված են ինքնա-  
քննադատության լոգունդի լայն և մասսայական կի-  
րառումից։

Քննադատել նկատված բոլոր թերությունները  
առանց վախենալու, խփել բոլոր նրանց, ովքեր թերա-  
նում և ծուլանում են իրենց աշխատանքներում, ժա-  
մանակին չեն կիրառում կոլեկտիվի վորոշումները,  
անտեղի ձևականությունների յետեկց են ընկնում,  
ձգձգում են կոլեկտիվի աշխատանքները —, սա յուրա-  
քանչյուր կոմյերիտականի և կոլխոզնիկի կարևորա-  
գույն պարտականություններից մեկն են։

Այս բոլորի հետ մեկտեղ պետք են դնել մեր կոլ-  
եկտիվների արտադրական պլանի խնդիրը։ Մինչև այ-  
ժըմ մեր կոլեկտիվներից շատերը չունեն իրենց ար-  
տադրական-կազմակերպչական պլանը, ուստի և կոլ-  
եկտիվի աշխատանքները տարվում են առանց ծրա-  
գրի և պատահական սխատիմով։ Ինչ կասկած, վոր այս  
յերեսույթը բացասաբար են անդրադառնում կոլեկտիվի  
աշխատանքների վրա, վորովհետև կոլեկտիվը չգիտե,  
թե ինչ են իր այս տարվան անհիքը, ինչից ոկտի և  
ինչով վերջացնի իր աշխատանքները, քանի հոգինոր

անդամներ են ընդունվելու. կոլեկտիվում, ինչպիսի կուլտուրաներ են զարգանալու կոլեկտիվում ե, վերջապես, գյուղատնտեսական վոր ճյուղն ե, վոր իր կոլեկտիվի հիմնական զբաղմունքը պետք է հանդիսանաւ:

Մասնավորապես վերջին հարցն ավելի քան կարեոր ե, վորովհետեւ մենք ունենք այժմ կոլեկտիվներ, վորոնք զբաղվում են թե անասնապահությամբ, թե այգեգործությամբ, թե դաշտավարությամբ և այլն. Նման սիստեմը հնարավորություն չի տալիս մեր կոլեկտիվներին իրենց հիմնական ուշադրությունը դարձնել գյուղատնտեսական այս կամ այն ճյուղի զարգացման վրա:

Անհրաժեշտ է, վորպիսզի մեր բոլոր կոլեկտիվներն ունենան թե իրենց տարեկան և թե մոտակա տարիների աշխատանքի ծրագիրը: Ճիշտ ե, այս աշխատանքը չափազանց դժվար ե, բայց ալդ դժվարության առաջ չպետք է կանգ առնել. Առհասարակ պետք է ձգտել այն բանին, վոր կոլեկտիվում վոչ մի աշխատանք չտարվի առանց ծրագրի և առանց սիստեմի:

Այդ ծրագրերը նախորոք պետք ե քննության առնվեն կոլեկտիվի ընդհանուր ժողովներում, վորպեսզի հաշվի առնվի կոլեկտիվի բոլոր անդամների դիտողությունն ու նրանց կարծիքը:

Ահա թե ինչպես պետք ե ամրապնդել յեղած կոլտնտեսությունները, և վորն է կոմյերիտմիության դերն այս ասպարիզում:

### ԿՈՄՍՈՄՈԼԸ ՄՅԱՌԻՒՄ ՊԱՇՏՊԱՆ

Վերեռում արդեն ասել ենք, վոր գյուղատնտեսությունը մեքենայացման յենթարկել հնարավոր ե խորհրդային և կոլտնտեսություններ կազմակերպելու

միջոցով։ Ասացինք նաև այն մասին, վոր գյուղատընտեսական մեքենաներ Հայաստանում շատ քիչ կան։ Այդ իսկ տեսակետից մեր լեռկրում լեղած մեքենաների նպատակահարմար ոգտագործումը և նրանց պահպանելը չափազանց կարևոր նշանակություն ունի։ Խնդիրը միայն նրանում չե, վոր շատ մեքենաներ ունենանք, այլ միաժամանակ նրանում, վոր յեղած մեքենաները կարողանանք ռացիոնալ (նպատակահարմար, ոգտակար) կերպով ոգտագործել։ Սակայն պետք ե շեշտել, վոր Հայաստանում լեղած մեքենաներն իրենց ոգտագործման տեսակետից միանդամայն անմըխիթար դրության մեջ են գտնվում։

Վերցնենք, որինակի համար, արակտորների ոգտագործումը մեզանում։ Հայաստանում մենք ունենք ընդամենը 214 տրակտոր, վորոնց մեծ մասը միանդամայն անպիագացել են, իսկ մյուս մասն ել այնպիս աշխատում, վոր շարաթը մեկանգամ ռեմոնտի յե զնում։ Դրա համար ել արակտորի ոգտագործումը մեզանում ավելի թանգ է նստում։

Այն ժամանակ, երբ Գերմանիայում մի տրակտորը տարեկան վարում և 230 հեկտար հող, հեկտարը 6 ռ. 13 կ., յերբ Ռուսաստանի Սամարայի նահանգում մի տրակտորը վարում և 150 հեկտար հող, հեկտարը 15 ռ., մեզ մոտ Հայաստանում կոլլեկտիվ անտեսությունների տրակտորը վարում և ընդամենը 80 հեկտար, հեկտարը 19 ռ., իսկ վարկային ընկերությունների տրակտորները՝ 45 հեկտար, հեկտարը 25 ռ.։

Այս յերկութը մեզանում մասամբ բացատրվում ե նրանով, վոր մեր հողամասերը ցրված են և բաժանվածան չե յեթե կոլխոզների տրակտորներն ավելի շատ

են վարել և ավելի եժան, դա բացատրվում է նրանով, վոր այնտեղ հողը կոլեկտիվացման է յենթարկված). լայց մեծ մասամբ նրանով, վոր մենք չգիտենք տրակտորների ռացիոնալ ոգտագործումը: Տարվա մեծ մասը նրանք անդործ են մնում, ավելի շատ ենք ծախսում տրակտորները ոեմոնտինյենթարկելու վրա և ալս բոլորը բարձրացնում են մեկ հեկտարի վարելագինը մինչև 25 ռ.:

Ավելի անմիխթար դրության մեջ են գտնվում մնացած գյուղատնտեսական մեքենաները:

Անհրաժեշտ է տրակտորների և մեքենաների ոգտագործման նման յեղանակին վերջ տալ: Մեր կողմեկտիվները պետք են աշխատեն ձեռք բերել վորակյալ տրակտորիստներ: Տրակտորիստը վոչ միայն պետք է իմանա տրակտոր բանեցնել այլև կարողանա հասկանալ նրանից և կարողանա փոքրիկ ոեմոնտներ կատարել: Իսկ դրա համար նա պետք է լինի վորակյալ:

Կոլեկտիվները պետք են ձեռք քաշեն նրանից, յերբ կոլեկտիվի այս կամ այն անդամը յերկու շարթով կամ մի ամսով արակտորի վրա աշխատելուց հետո արդեն ստանձնում է տրակտորի զեկավարման գործը: Պետք են ձեռք քաշել միաժամանակ նրանից, յերբ կողմեկտիվի այս կամ այն անդամը, յերբեմն քեֆի համար, յերբեմն սովորել ցանկանալու համար, փչացնում է տրակտորը:

Տրակտորը և առհասարակ ամեն մի մեքենա պետք է պահել այնպես, ինչպես կարմիր-բանակայինը պահում է իր զենքը: Զե՞ վոր տրակտորն ու մեքենան ել մեր կոլեկտիվների զենքերն են, վորոնց միջոցով չքավոր և միջակ գյուղացիությունը պայքարում

և կուլակների գեմ։ Կոմյերիտականները պետք ե ծգտեն այն բանին, վոր բոլոր մերենաները պահվեն աչքի լու։ սի պես։

Մեր բջիջները պետք ե բոլոր միջոցները ձեռք առնեն, վոր մեքենաների փչացած մասերը ժամանակին վերանորոգվեն և կազմ-պատրաստ լինեն աշխատանքի համար։ Պետք ե նախորոք աշխատանքի պլան կազմել տրակտորի աշխատանքների համար, թե նա այս-ինչ ամսին կամ այս-ինչ շաբաթվա ընթացքում վոր հողամասումն և աշխատելու և յերբ և վերջացնելու իր աշխատանքը։

Պետք ե կազմակերպել նաև տրակտորներն այլ գծով ոգտագործելու խնդիրը դաշտալին աշխատանք ները վերջացնելուց հետո։ Մի շարք տեղերում տրակտորն ոգտագործում են վորպես փոխադրական միջոց, այլ տեղերում՝ վորպես շարժիչ մեքենա և այլն։

Այսպիսով մեքենան ամբողջ տարին աշխատում եւ

Յեկ, վերջապես, մեր բջիջները պետք ե ծգտեն նըրան, վոր մոտակա տարիներում գյուղում՝ յեղած բուր արորները փոխարինվեն գութանով (այս մասին կա համապատասխան վորոշում)։ Պետք ե կազմակերպել «արորները գութանով փոխարինող» ընկերություններ։ Պետք ե խրախուսել այն բոլոր չքավոր և միջակ գլուղացիներին, վորոնք անհատապես կամ կոլլեկտիվ ուժերով գյուղը մեքենա յեն ներմուծում, լինի դա տրակտոր, շարքացան, քաղհանիչ, թե այլ կարգի փոքը մեքենաներ։

Այսպիսով գյուղական մեր կազմակերպությունների առաջ դրվում ե մի կողմից գյուղը մեքենացման յենթարկելու խնդիրը, իսկ միուս կողմից՝ լեղած

մեքենաների ուսցիոնալ ովտագործման և նրա պաշտպանության խնդիրը:

«Կոմսոմոլը մաշինի պաշտպանն ե»—ահա մեր լողունգներից մեկը: Առանց մեքենաների չի զարգանալու մեր գյուղը, իսկ առանց կոլեկտիվ տնտեսության հնարավոր չի ձեռք բերել խոշոր մեքենաներ: Ուրեմն կազմակերպենք կոլեկտիվ տնտեսություններ գյուղատնտեսության մեքենայացման ուղիով:

### ԿՈԼԽՈՉՆԻՔ ԳԵՏՔ Ե ՎԵՐԱՑՆԻ ԸԳՐՈՆՈՒՅԿԱՆ ԸՆԳՐԱԳԻ- ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպած կոլեկտիվների արդյունավետ աշխատանքը կախված է միաժամանակ նրանից, թե ինչպես են զրված ազրո-սպասարկման և ազրո-կուլտուրական աշխատանքները նրանցում:

Հայտստանի այն կազմակերպությունները, վորոնք զրազված են ազրոնոմիական ուժեր պատրաստելու գործով (Համալսարան, գյուղատեխնիկումներ և այլն) կազմակերպվելիք կոլեկտիվ տնտեսությունների ներկա արագ տեմպի շրջանում չեն կարող բավարարել մեր կոլտնտեսությունները յերիտասարդ գյուղատնտեսական ուժերն ել չեն բավարարում մեր գյուղատնտեսական պահանջներին քանակական տեսակետից: Մենք դեռ յերկար ժամանակ ազրոնոմիական ուժերի պակաս կզգանք մեզանում: Այդ իսկ տեսակետից անհրաժեշտ է կենտրոնացնել ազրոկուլտուր աշխատանքը կոլեկտիվներում, կոլեկտիվ տնտեսությունների անդամներին մինիմում գյուղատնտեսական պիտելիքներ տալու նպատակով:

Հատկապես ալս ասպարիզում խոշոր դեր ունին  
կատարելու մեր կոլխոզները և ԼԿՅՆՄ բջիջները:

Յեթե առաջմ հնարավոր չե յուրաքանչյուր կամ  
միքանի գյուղի համար մի գյուղատնտես ունենալ,  
հապա մեր բջիջները պետք ե կազմակերպեն մասսա-  
յական ազրո-կուլտուր աշխատանք գյուղացիության  
մեջ, շրջանում լեղած գյուղատնտեսների ղեկավարու-  
թյամբ: Այս աշխատանքը պետք ե կենտրոնացնել կոլ-  
լեկտիվ տնտեսություններում առաջին հերթին:

Մեր կոլեկտիվ տնտեսություններն այնպիսի  
տնտեսություններ պետք ե լինեն, վոր աչքի ընկնեն  
և որինակելի լինեն շրջապատի գյուղացիության մեջ  
վոչ միայն իրենց կազմակերպվածությամբ, արտադրո-  
ղականության բարձրացմամբ, աշխատանքի կարգա-  
պահությամբ և բերքատվության բարձրացմամբ, այլ  
և ազրո-կուլտուր պատրաստականությամբ և կուլտու-  
րական աշխատանքներով: Նրանք պետք ե այն կենտ-  
րունները լինեն գյուղում, վորտեղից շրջապատի գյու-  
ղացիությունը պետք ե ստանա անհրաժեշտ ցուց-  
մունքներ և խորհուրդներ գյուղատնտեսական գիտե-  
լիքների վերաբերյալ:

ԼԿՅՆՄ բջիջները պետք ե կազմակերպեն «Պայքար  
ազրոնումիական անզրագիտության դեմ» ընկերու-  
թյուններ և խմբակներ գյուղերում և կոլեկտիվ տըն-  
տեսություններում: Այդ ընկերություններն առաջին  
հերթին պետք ե ընդգրկեն կոլխոզների բոլոր անդամ-  
ներին և ապա գյուղացիությունը, վորից հետո գյուղա-  
տնտեսի ղեկավարությամբ ունինան սիստեմատիկ  
պարապմունքներ: Այս աշխատանքը չափազանց կարե-  
վոր ե. կարեոր ե այն տեսակետից, վոր մենք այդ

գասընթացքներում հնարավորություն կտանք յուրաքանչյուր կոլխողնիկի և ամեն մի գյուղացու ձեռք բերել մինիմում գյուղատնտեսական գիտելիքներ, Կարենը աշխատանք և այն տեսակետից, վոր ազգու-կուլտուր աշխատանքը կապվում և միաժամանակ մեր հակակրոնական աշխատանքների հետ. Ահա թե ինչու համար կոմսոմոլն այս աշխատանքն իր վրա պետք ենքըցնի:

Սրա հետ մեկտեղ կոմիերիտական բջիջները պետք և լայն չափով տարածեն թե կոլեկտիվում և թե գլուղացիութիւնն մեջ հրապարակի վրա յիղած գյուղատնտեսական դրականությունը, կազմակերպեն բարձրաձայն ընթերցանություններ խրճիթ-ընթերցարանում և կոլեկտիվում, այսպիսով տարածելով ազրուկուլտուրական աշխատանքը լայն գյուղացիական մասնաներում:

### ԿՈԽՏԱԻՐ-ԿԵՆՑԱԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԼԿՅԵՄ ԽՆԴԻԲՆԵՐԸ

Մեր վերև հիշված ամբողջ աշխատանքների հաջողությունների ընթացքն ապահովվում և այն դեպքում, յերբ կանոնավոր հիմքերի վրա կդրվեն կուլտուր-դաստիարակչական աշխատանքները կոլտնտեսություններում: Կուլտուր-դաստիարակչական աշխատանքներից և կախված կոլխոզնիկների կենցաղային կյանքի կազմակերպումը, նրանց առաջադիմությունը և, վերջապես, ազրոնոմիական աշխատանքների ծավալումը:

Մենք գիտենք, վոր կուլտուր-դաստիարակչական աշխատանքը կոլխոզներում դեռևս չափազանց թուլ

ե գրված։ Որինակի համար վերցնենք անզրագիտության վերացման խնդիրը։ Խորհրդակին Միության բոլոր կոլտնտեսություններում անդրագետների թիվը 400 հազարի լի հասնում։ Մեզ մոտ Հայաստանում անդրագետները նույնպես մեծ տոկոս են կազմում կոլտնտեսություններում։ Կասկածից դուրս ե, վոր անդրագետների այս հսկա բանակը դժվարացնում և կոլխոզներում տարվելիք քաղաքական դաստիարակչական աշխատանքները։ Այդ իսկ տեսակետից մեր ըջիջների առաջ դրվում և կոլխոզնիկների անզրագիտության վերացման խնդիրը, վորպես չափազանց կարևոր և անհետաձգելի խնդիր։ «Վոչ մի անզրագետ կոլտնտեսություններում»—սա պետք է դարձնել մեր ըջիջների աշխատանքի ծրագրի հիմնական հարցերից մեկը։

Վերոհիշյալի հետ մեկտեղ պետք է կազմակերպել նաև կոլխոզնիկների բաղարական անզրագիտության վերացման գործը—ավելի քան կարեոր մի խնդիր։ Կոլեկտիվ տնտեսություններում ընդգրկված գլուղացիների գերազանց մասը քաղաքականապես միանգամայն անզրագետ ե, հետեապես և զուրկ քաղզրագիտական տարրական գիտելիքներից։

Այն կոլխոզնիկը, վոր քաղաքականապես և տեխնիկապես անզրագետ ե, չի կարող ըմբռնել և հասկանալ գլուղում տարվելիք մեր ընթացիկ քաղաքականությունը, կոլխոզ շարժման հեռանկարները և առհասարակ այն քաղաքական և տնտեսական խնդիրները, վորոնք դրվում են մեր ամենորյա աշխատանքների որտկարգում քաղաքում և գյուղում։

Դեռ ավելին. տեխնիկապես և քաղաքականապես

անդրագետ կոլխողնիկը չի կարող կոլխողնիկ-ազիտա-  
տոր և կազմակերպիչ լինել, նա հաջողությամբ չի  
կարող պայքարել գյուղի կուլակների և առհասարակ  
մեր դասակարգային բռոր թշնամիների դեմ: Կոլխող-  
ներում ընդդրկված միջակ կամ չքավոր գյուղացին  
վոչ միայն պետք և լինի սոսկ կոլեկտիվ տնտեսու-  
թյան անդամ, այլ և գիտակից, կուլտուրապես առա-  
ջապես և քաղաքականապես պատրաստված:

Մեր կոլխողները պետք և տարբերվեն անհատա-  
կան գյուղացիական տնտեսություններից վոչ միայն  
նրանով, վոր համայնական հողամշակման և կոլեկ-  
տիվ աշխատանքի յեն անցել, այլև նրանով, վոր կուլ-  
տուրապես և քաղաքականապես միքանի անգամ ա-  
վելի բարձր կանգնած են անհատական տնտեսություն-  
ներից:

Յուրաքանչյուր կոլխողնիկ պետք և խմանա, վոր  
նա կոլեկտիվ տնտեսության անդամ լինելով հանդերձ՝  
միևնույն ժամանակ գյուղում սոցիալիզմ կառուցող  
աղիտատորն և և կազմակերպիչը: Նա պետք և կա-  
րողանա մեծ կազմակերպչական և պրոպագանդիստա-  
կան աշխատանք տանել իրենց և հարևան գյուղերում,  
նա պետք և կարողանա նոր չքավոր և միջակ գյուղա-  
ցիներ ներգրավել կոլտնտեսությունների մեջ, նա  
պետք և կարողանա նոր կոլտնտեսությունների հիմք  
դնել. ահա թե ինչ և պահանջվում ամեն մի կոլխող-  
նիկից:

Կը կնում ենք, այս բոլոր աշխատանքների հա-  
մար կոլխողնիկը պետք և լինի գրագետ և քաղաքա-  
կանապես պատրաստված:

ԼԿՑԵՄ բջիջների դերը կայանում և նրանում,

վոր նրանք կարողանան իրենց ինքնազործունելութեամբ կազմակերպել կոլեկտիվի անդամների տեխնիկական և քաղաքական անգրագիտության վերացման գործը։ Այս աշխատանքներին ավելի լայն ծավալ պետք է տալ ձմեռվա ամիսներին, իերբ կոլեկտիվի անդամներն աղատ են դաշտային աշխատանքներից և քիչ են դրաղված։ Բջիջները պետք է կազմակերպեն անգրագիտության և քաղաքական անգրագիտության վերացման խմբակներ ամեն մի կոլեկտիվում։ Նրանք պետք է ոգտագործեն հանգստի և տոն որերը՝ կազմակերպելու վորևե կուլտուրական աշխատանք և քաղաքական զրույց կոլխոզնիկների համար։

Տեխնիկական յեվ բազաբական վոչ մի անգրագութեան կութանառություններում, —այս նշանաբանի տակ պետք է աշխատեն մեր բջիջները կուլտուր-դաստիարակչական ֆրոնտում։

Հետեւալ ավելի կարեոր խնդիրը, վորը կապվում է կուլտուր-դաստիարակչական աշխատանքների հետ, — կինոյի, ռադիոյի և առհասարակ կուլտուրական կենցաղի կազմակերպման խնդիրներն են։

Պայքարելով հարբեցողության, ծխելու, անկուլտուրական կենցաղի և սնուտիապաշտության դեմ, մենք պետք է կազմակերպենք կինոյի, ռադիոյի, թատրոնի, շախմատի տարածման և մասսայականացման գործը կուլտուրանառություններում։

Ավելի քան կարեոր հիմքերի վրա պետք է դնել հակակրօնական աշխատանքը կոլխոզներում։ Պետք է կազմակերպել անաստվածների խմբակներ կոլեկտիվներում՝ ունենալով՝ «կոլեկտիվիստը անաստված ե» նշանաբանը։

Մեր բջիջները հրապարակելով «կորչի հարբեցությունը յեվ անկուլտուրական կյանքը» լոգունզը, դրա փոխարեն պետք է առաջադրեն՝ ամեն մի կոլեկտիվ շինուածք և ունենալ իր սագիո-ապարատը, շախմատալին-խմբակը, ընթերցարանը, լենինյան անկյունը և այլն։

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել կոլխոզնիկների կուտուր-գեղարվետական ընդունակությունները (յերգ, նվագ, պար) և սիստեմատիկարար կազմակերպել յերեկություններ, ներկայացումներ, զվարձության պերեկուններ, մի խոսքով՝ կոլեկտիվի անդամների խելացի հանդիսաբը։

Ենք վերջապես, մեր կունեկտիվների առաջ այժմս դրվում և կուլտուրական կոլեկտիվ կենցաղի կազմակերպման խնդիրը։ Կազմակերպել կոլտնտեսության համար ընդհանուր բնակարաններ, ճաշարաններ, մսուր-մանկավարտեղներ, կանոնավոր գրադարան-ընթերցարան և ժողովատեղ—սրանք ել ավելի կնպաստեն կոլեկտիվ տնտեսությունների ավելի բարձր ձևերին անցնելու՝ կոմմունաների կազմակերպմանը։

Մեր բջիջները հաշվի առնելով կոլեկտիվների նյութական հնարավորությունները՝ աստիճանաբար պետք է նախաձեռնեն վերջինների կազմակերպմանը, ել ավելի առաջ մզելով կոլեկտիվ կատարելի կառավարությունը կազմակերպմանը։

Մեր առաջ դրված է կոլեկտիվներում ընդգրկելով միջակ և չքավոր գյուղացիությունը կոլեկտիվ գողով վերամշակելու և դաստիարակելու խնդիրը։ Այս աշխատանքն ավելի դժվար է, քան թե կոլտնտեսությունների կազմակերպումը։ Ուստի և ավելի համառաջիանանք և պահանջում մեզանից և տոկունություն,

գորպեսզի մենք կարողանանք դուքս բերել գլուղացի-  
ությունը դարավոր տղիտությունից և անկուլտուրա-  
կանությունից՝ ուղղելով նրա առաջխաղացումը. դեպի  
կուլտուրական կյանքը, դեպի սոցիալիստական շինա-  
րարությունը:

### ԿՈՂԵԿՏԻՎՆԵՐԻՆ ԿԻՑ ԼԿՅԵՄ ԲՁՒՉՆԵՐԻ ԽՆԴԻԲՆԵՐԸ

Կողեկտիվներին կից կազմակերպված ԼԿՅԵՄ բջիջ-  
ների աշխատանքը պետք է լինի այն բոլոր խնդիր-  
ները, ինչ վոր մինչև այժմ շեշտեցինք: Նրանց աշխա-  
տանքի ծրագիրը հիմնականում պետք է բջիջի և ընդ-  
դրկի այն բոլոր խնդիրները, ինչ վոր ներկայումս  
դրված են կողեկտիվ տնտեսությունների առաջ:

Այնուհետև մեր բջիջների առաջ դրվում են նաև  
միությունից գուրս գտնվող յերիտասարդ լավագույն  
աշխատասեր կոլխոզնիկներին միության մեջ ընդգր-  
կելու խնդիրը: Դրված են նաև լավագույն առաջավոր  
կոլխոզնիկներին կուսակցության շարքերն ընդգրկե-  
լու խնդիրը:

Կուսակցության և միության բջիջների կամ նը-  
րանց ֆրակցիաների աշխատանքները պետք են կտ-  
ուցել այնպես, վորպեսզի համարավոր լինի անկուս  
կոլխոզնիկներին համախմբել կուսակցության և մի-  
ության բջիջների շուրջը: Մեր բջիջները պետք են հե-  
տևեն, վոր յուրաքանչյուր կոմիերիտական աշխատան-  
քի պրոցեսում և նրանից գուրս սերտ համագործա-  
կության մեջ լինի կոլտնտեսության միուս անդամ-  
ների հետ: Մեր բջիջները պետք են միջոցներ ձեռք առ-  
նեն, վորպեսզի վոչ մի կոմյերիտական առանձին ար-


տոնություններ չվայելի անկուսակցականների նկատ-  
մամբ:

Ավելորդ չի լինի մի անգամ ևս շեշտել, վոր կոլ-  
յեկտիվ անտեսության աշխատանքների բոլոր բնա-  
դավառներում, լինի դա տնտեսական շինարարական,  
ազգային միական կենցաղային, թե կուլտուրական, կոմ-  
յերիական կոլխոզնիկը պետք է լինի ամենաառաջին  
շարքերում իր որինակելի աշխատանքով, կարգապա-  
հութլամբ և ամեն ինչով։ Ահա թե ինչ ե պահանջվում  
ամեն մի կոմիերիական կոլխոզնիկից։

---

Այս գրքույկում դրված բոլոր ինպիրներից պարզ-  
վում է, վոր կոլեկտիվ անտեսությունները դառ-  
նում են սոցիալիզմի կառուցման հիմքերը գյուղում։  
Պարզվում է, վոր կոլեկտիվ տնտեսություններն այն-  
կենտրոններն են, վորտեղից շրջապատի գյուղացիու-  
թյունը որինակ վերցնելով՝ պետք է վերակառուցի իր  
տնտեսությունը կոլեկտիվ հիմունքներով։

Կոլեկտիվ տնտեսությունները այն կուլտուրա-  
կան ոջախներն են, վորտեղից միլիոնավոր և տասնյակ  
միլիոնավոր գյուղացիներ պետք է հեղաշրջեն իրենց  
կենցաղը, իրենց ապրելու ձևերը։ Այս մի հըս-  
կայական և նոր սկսված աշխատանք են առաջնոր-  
դում և չքավոր և միջակ գյուղացիությունը դեպի սո-  
ցիալիզմը։ Ուրեմն կոմիերիական վոգերութլամբ ա-  
ռաջ շարժվենք դեպի կոլեկտիվ տնտեսությունները։



P



2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038862

Ա643

ԳԻՆԸ 20 ԿՈՊ-

10

3

A I  
4102

